AZG NEW PDF.qxd 12/05/2010 21:57 Page 1

Ազգ
Azg
13 ՄԱՅԻՍ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 87 (4467)
ISSN: 1829-1651

# «Իմ մոր կողմից քուրդ, իսկ հոր՝ թուրք պապերը բնաջնջեցին մի ամբողջ ժողովրդի»

## *«Ցեղասպանությունը չի կարող պատճառաբանություն ունենալ»*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հակառակ հայաստանյան որոշ գիտնականների ենթադրությունների, թե Հայոց ցեղասպանությունը բազմակողմանի ուսումնասիրված է եւ հայ պատմագրության մեջ սպառիչ պատասխան է տրված բոլոր հարցերին, դրանցից շատերն առ այսօր բաց են մնում: Կան նաեւ հարցեր, որոնք նույնիսկ չեն էլ արծարծվել:

Չուսումնասիրված հարցերի թվում պետք է նշել քեմալականների իթթիհատական ծագումն ու օսմանյան ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը, թուրքական ժողովրդական զանգվածների մասնակցությունը հայերի կոտորածներին, «Թեշքիլաթ-ը Մահսուսայի» գլխավորությամբ պետական կառույցների եւ բանակի դերը, Մուստաֆա Քեմալի մերձակա շրջապատի ոճրագործ դիմագիծն ու Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կազմի մեղսակցությունը, Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, ճշմարտության ուրացման հարցում իշխանություն-ժողովուրդ համերաշխությունը Թուրքիայում, դրա խորքային արմատները, հայերի ունեցվածքի պետական եւ ժողովրդական հափշտակումը, Հայկական հարցի ու Աթաթուրքի տաբուի առնչությունները, եւ վերջապես՝ հայ երեխաների կյանքը խնայելու թուրքական դրսեւորումների դրդապատճառներն ու դա իբրեւ «մարդասիրություն» դիտարկելու փորձերի բուն էությունը:

Քանի որ Թուրքիայում պատմաբաններն առանձնակի ջանասիրությամբ զբաղված են ցեղասպանության թուրքական պաշտոնական թեզի՝ ժխտողականության հիմնավորմամբ, ուստի եւ վերոհիշյալ հարցերը դուրս են մնում նաեւ թուրք պատմագրության տեսադաշտից: Դրանց մամուլի էջերում թեկուզ մասնակի անդրադառնում են առանձին հեղինակներ, որոնցից թերեւս պետք է առանձնացնել «Հրաձիգ պապերս» հոդվածի հեղինակ **Հասան Բիլդիրիջիին** եւ հայտնի թուրք գիտնական **Իսմայիլ Բեշիքչիին**, որը գրի է առել «Հայոց ցեղասպանությանն առնչվող երկու հիմնարար խնդիր» հոդվածը:

Տես էջ 3

# Դմիտրի Մեդվեդեւ. Հայ-թուրքական գործընթացը «դյուրին չէ»

## *ՌԴ նախագահի այցելությանը էներգետիկ հարցերը թերեւս ամենակարեւորն էին*

Մոսկվան եւ Անկարան մտադիր են համագործակցել կովկասյան տարածաշրջանում կայունության ամրապնդման, եւ մասնավորապես ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: Երեկ Թուրքիա կատարած այցելության ընթացքում, ըստ «ՌԻԱ նովոստի» գործակալության, այսպիսի հայտարարություն է արել Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը՝ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի հետ հանդիպումից հետո, մամուլի ասուլիսում:

«Եվ Ռուսաստանը, եւ Թուրքիան շահագրգռված են կովկասյան տարածաշրջանում կայունության ամրապնդմամբ, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտության լուծմամբ, եւ Ռուսաստանն իր կողմից այդ գործընթացը առաջ է տանելու՝ օգտագործելով բոլոր միջոցները, իր հեղինակությունն ու ազդեցությունը», ասել է Մեդվեդեւը: Ամեն դեպքում, ղարաբաղյան հարցի կարգավորման գործում Մեդվեդեւն ընդգծել է ԵԱՀԿ Մինսկի խմբի դերակատարությունը: «Վերջին ժամանակներս կողմերը զգալի եւ լուրջ քայլ են կատարել առաջ: Հիմա գլխավորը ձեռքբերվածի վրա կանգ չառնելն է»:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական գործընթացին, որ Մեդվեդեւի այցելության օրակարգում նախապես նշված էր որպես «քննարկման հավանական թեմա», ապա այս առնչությամբ Ռուսաստանի նախագահը Թուրքիայում հույս է հայտնել, թե Հայաստանն ու Թուրքիան ի վերջո կկարողանան հասնել հարաբերությունների վերականգնմանը:

Տես էջ 3

# Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունեց ԵԽԽՎ նախագահին

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունեց Երեւան ժամանած Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մեվլութ Չավուշօղլուին:

Ողջունելով հյուրին՝ ՀՀ նախագահը հույս է հայտնել, որ ԵԽԽՎ նախագահի գլխավորած պատվիրակության այցը կօգնի տեղում ծանոթանալու եւ ավելի օբյեկտիվ կարծիք կազմելու Հայաստանում եւ տարածաշրջանում առկա մարտահրավերների մասին: «Այս այցելությունը հնարավորություն կընձեռի նաեւ քննարկելու մեր օրակարգային հարցերը, եւ համոզված եմ, որ կնպաստի Հայաստանի Հանրապետության եւ Եվրախորհրդի համագործակցության խորացմանը, մասնավորապես՝ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի եւ ՀՀ Ազգային ժողովի միջեւ: Մենք ցանկանում ենք եւ պատրաստ ենք սերտացնել հարաբերությունները եւ համագործակցությունը», նշել է նախագահ Սարգսյանը:




Մեվլութ Չավուշօղլուն ասել է, որ որպես ԵԽԽՎ նորընտիր նախագահ՝ իր գործունեության գերակայություններից է համարում վեհաժողովի եւ անդամ պետությունների միջեւ հարաբերությունների խորացումը, անդամ պետությունների հանդեպ երկակի չափանիշների կիրառման բացառումը՝ պահպանելու օբյեկտիվ եւ հավասարակշիռ վերաբերմունք բոլորի նկատմամբ:

Վեհաժողովի նախագահն ասել է, որ ԵԽԽՎ-ում Հայաստանի խորհրդարանական պատվիրակության հետ սերտ համագործակցություն է ծավալվել: Նա նաեւ բարձր է գնահատել Հայաստանի արձանագրած առաջընթացը ժողովրդավարական բարեփոխումների եւ կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացներում:

## ՀԱՄԱՌՈՏ

# Վաղը կգումարվի «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ

**Վաղը կառավարության ընդունելությունների տանը կգումարվի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 19-րդ՝ հերթական նիստը, որը կնախագահի խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը: Լսվելու են 2009 թվականի գործունեության ֆինանսական եւ ծրագրային հաշվետվությունները, հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի եւ միջազգային աուդիտորական ընկերության եզրակացությունները, կցուցադրվի տարվա հաշվետու ֆիլմը: Այս բոլորից հետո կհաստատվեն հիմնադրամի ծրագրային ուղղությունները, տարվա ռազմավարական ծրագիրը, որին կնպատակաուղղվեն հեռուստամարաթոն-2010-ի նվիրատվությունները:**

# Հայաստան է գալիս ԱՄՆ-ի փոխպետքարտուղարի տեղակալը

**Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տեղեկացմամբ՝ վաղը Երեւան կժամանի ԱՄՆ- փոխպետքարտուղարի տեղակալ Թինա Քեյդենաուն, որը մեկ օր առաջ այցելել էր Ադրբեջան: Ադրբեջանում Քեյդենաուն մի շարք հանդիպումներ է ունեցել բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:**

# Բուլղարիայում լույս է տեսել «Եվրոպա 2010» ամսագիրը՝ նվիրված Հայաստանին

**Ըստ Հայաստանի արտգործնախարարության տեղեկատվության՝ Բուլղարիայում Հայաստանի դեսպանատան նախաձեռնությամբ հրատարակվել է «Եվրոպա 2010» ամսագրի ապրիլյան համարը՝ ամբողջովին նվիրված Հայաստանին: Այն ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալու ինչպես հայ ժողովրդի պատմական անցյալին, մշակութային ժառանգությանը, ավանդույթներին եւ կրոնին, այնպես էլ երկրի արտաքին, ներքին եւ տնտեսական քաղաքականության նկարագրին: Ամսագրի շնորհանդեսը տեղի է ունեցել մայիսի 10-ին Բուլղարիայի մշակույթի նախարարությունում, որտեղ ելույթ են ունեցել Բուլղարիայում Հայաստանի դեսպան Սերգեյ Մանասարյանը, Բուլղարիայի մշակույթի փոխնախարար Թոդոր Չոբանովը եւ ամսագրի գլխավոր խմբագիրը:**

# Հայոց լեզվի ուսուցչի արարքները որակեցին «պեդոֆիլիա»

Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում երեկ շարունակվեց մեծ աղմուկ հանած Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի նախկին ուսուցիչ Լեւոն Ավագյանի գործով դատական նիստը: Մեղադրող դատախազ Կարեն Բադիկյանն հայոց լեզվի ուսուցչի արարքները դպրոցի անչափահաս սաների նկատմամբ որակեց «պեդոֆիլիա» (մանկապղծություն)՝ դատարանից պահանջելով Ավագյանին ազատազրկել 1.5 տարով: Ավագյանը, որ նախկինում հրաժարվում էր մեկնաբանություններից՝ մեղադրանքներն անվանելով զրպարտություն, իրեն մեղավոր ճանաչեց եւ խնդրեց դատարանից գործը քննել արագացված կարգով:

Հիշեցնենք, որ Ավագյանը մեղադրվում է Քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բռնությամբ անառակաբարո գործողություններ կատարելու մեջ, որի համար նախատեսված է առավելագույնը 3 տարի ազատազրկում:

Հ. Հ.

# ԹՄՄ «Աղամանդակուռ Արարատ» շքանշան՝ Ստեփան Պողոսյանին

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Պատմաբան Ստեփան Պողոսյանի կատարածը թերեւս կբավականացներ մի քանի մարդու կենսագրություն գրելու համար: Կյանքի մեծ մասը նվիրել է հայ ժողովրդի պատմության ամենաբարդ շրջանի՝ Հայոց ցեղասպանության փաստերի հետազոտությանը: «Ինձ բահ տվեք», «Սասունցիներ», «Գոյատեւման պայքարի քառուղիներում», «Մեծ ոճիրը մեղադրում է» գրքերի հեղինակի՝ Գ. Գյուլբենկյան հիմնարկության մեկենասությամբ վերջերս հրատարակած «Հայոց ցեղասպանության պատմություն» եռահատոր (3-րդը դեռեւս հրատարակության ընթացքի մեջ է) աշխատության արժեքը հսկայական է: Քննարկվող հարցերը բազմաթիվ են՝ ցեղասպանության սոցիալ-հոգեբանական հիմքերից մինչեւ օսմանիզմի-պանօսմանիզմի, իսլամիզմի եւ պանիսլամիզմի գաղափարներ: Պատմաբանն օգտագործել է ոչ միայն հայ, այլեւ արտասահմանում հրատարակված բազմաթիվ գրքեր, արխիվներ, նամակներ ու պարբերականներ:**




**Ստեփան Պողոսյանի գործունեությունն արժեւորելու, վաստակը գնահատելու, սիրելի բարեկամին տեսնելու ու գրքի շնորհանդեսին ներկա գտնվելու նպատակով էին երեկ Թեքեյան մշակութային միություն այցելել բազմաթիվ մտավորականներ, գիտնականներ, հասարակական ու քաղաքական եւ պետական գործիչներ:**

**«Պատմությունը գիտության այն բնագավառներից է, որ հաճախ շահարկվում է: Ի դեմս Ձեզ ունենք ազնվագույն հեղինակ, որ որեւէ քաղաքական գծի, կուսակցական պատկանելության ազդեցության տակ չընկավ: Ժողովուրդը վստահում է Ձեզ, Ձեր գրչին, խոսքերին», ասաց Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը՝ Ստեփան Պողոսյանին հանձնելով ԹՄՄ բարձրագույն պարգեւ՝ «Աղամանդակուռ Արարատ» շքանշանը:**

Տես էջ 2

# Միասնական քննությունները կմեկնարկեն հունիսի 1-ին



Այս տարի միասնական քննությունները կմեկնարկեն հունիսի 1-ին՝ կենսաբանություն, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն առարկաներով: Հունիսի 4-ին շրջանավարտները քննություն կհանձնեն հայոց լեզու եւ հայ գրականություն առարկաներից, հունիսի 8-ին՝ ֆիզիկայից, օտար լեզվից՝ հունիսի 11-ին, մաթեմատիկայից՝ հունիսի 15-ին, հայոց պատմությունից ու քիմիայից՝ հունիսի 19-ին եւ ռուսաց լեզվից՝ հունիսի 23-ին, որով էլ կավարտվի միասնական քննությունների առաջին փուլը:

Երեկ Գնահատման եւ թեստավորման կենտրոնում (ԳԹԿ)՝ ասուլիսի ժամանակ ԳԹԿ-ի մշակումների եւ կազմակերպական բաժնի պետ **Կարո Նասիբյանը** տեղեկացրեց, որ ընդունելության դիմում հայտերը դիմորդները կարող են հանձնել մայիսի 5-ից մինչեւ հունիսի 1-ն ընկած ժամանակում, սակայն միասնական քննությունների դիմում հայտերի առաջին փուլի ժամկետն արդեն ավարտվել է: Արդեն հայտնի է դիմորդների ընդհանուր թիվը՝ 17665, նախորդ տարի դիմորդների թիվը կազմել է՝ 19164: Երեւանից հայտ են ներկայացրել 6160 դիմորդ, Արագածոտնից՝ 730 դիմորդ, Արարատից՝ 1119, Արմավիրից՝1330, Գեղարքունիքից՝ 1248, Լոռիից՝ 1430, Կոտայքից՝ 1293, Շիրակից՝ 1522, Սյունիքից՝ 838, Վայոց ձորից՝ 381, Տավուշից՝ 728 եւ ԼՂՀ-ից՝ 876 հոգի:

«3 կատեգորիայի դիմորդներ՝ այս տարվա գարնանային զորակոչից զորացրված զինծառայողները, ՀՀ այն քաղաքացիները, որոնք այս տարի ուսումն ավարտում են օտարերկրյա պետության ուսումնական հաստատությունում, եւ այն շրջանավարտները, որոնք ՀՀ քաղաքացիներ չեն, բուհերում իրենց դիմումները կարող են հանձնել մինչեւ հուլիսի 10, իսկ քննության համար դիմում հայտ կարող են ներկայացնել հունիսի 24-ից մինչեւ հուլիսի 1-ը, այսինքն՝ կարող են մասնակցել մեր դիմում-հայտագրման երկրորդ փուլին: Նրանք քննությունները հանձնելու են հուլիսին՝ լրացուցիչ փուլի ժամանակ», ասաց Կարո Նասիբյանը:

Եթե նախկինում դիմորդը կարող էր դիմել միայն տվյալ քաղաքի բուհեր, ապա հիմա մինչեւ 8-րդ հայտով կարող է դիմել նաեւ ուրիշ քաղաքների պետական համալսարաններ, օրինակ՝ ԵՊՀ դիմած շրջանավարտը կարող է դիմել նաեւ Գավառի կամ Գորիսի պետական համալսարան:

«Այս անգամ խստացրել ենք շրջանավարտի, դիմորդի վարքի կանոնները: Եթե նախկինում դիմորդին միայն երկրորդ զգուշացումից հետո կարող էինք հեռացնել քննասենյակից, ապա հիմա կարգը թույլ է տալիս որոշակի խախտումների դեպքում շրջանավարտին անմիջապես հեռացնել լսարանից՝ գնահատելով նրա գնահատականը անբավարար», ասաց Կարո Նասիբյանն ու մանրամասնեց, որ նշված որոշակի խախտումների մեջ են մտնում բջջային հեռախոսից ու ծածկագրից օգտվելը: Անկախ նրանից՝ շրջանավարտը կխոսի, թե չի խոսի բջջային հեռախոսով, եթե նրա մոտ հայտնաբերվեց բջջային հեռախոս, ապա շրջանավարտը կհեռացվի քննությունից:

«Մեզ շատ են դիմում ոստիկանական ակադեմիա դիմած այս տարվա շրջանավարտները, նրանց ծնողներն ու դպրոցների տնօրենները: Նրանք, բնականաբար, ուշացել են առաջին փուլին մասնակցելու իրավունքից: Մեր առաջին փուլի հայտագրման ժամկետը լրացել է ապրիլի 10-ին, քննության համար դիմում-հայտ այլեւս չենք կարող ընդունել, սակայն թե՛ ոստիկանական ակադեմիայի, թե՛ այլ ուսումնական հաստատության դիմորդները, որոնք չեն մասնակցել առաջին փուլին, կարող են մասնակցել լրացուցիչ փուլին: Քննությունների հայտագրումը ԳԹԿ-ում լինելու է հունիսի 24-ից մինչեւ հուլիսի 1-ը», ասաց Կարո Նասիբյանը եւ հավելեց, որ լրացուցիչ փուլին մասնակցող դիմորդները մինչեւ հունիսի 1-ը պետք է իրենց գործերը հանձնեն համապատասխան բուհեր, որովհետեւ, ինչպես նշվեց, միայն 3 կատեգորիայի դիմորդների համար են բուհերում գործերն ընդունվում մինչեւ հուլիսի 10:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ԹՄՄ «Ադամանդակուռ Արարատ» շքանշան՝ Ստեփան Պողոսյանին

*1-ին էջից*

Դահլիճում տիրող մթնոլորտը տոնական էր: Շատերն էին ցանկանում սիրելի ընկերոջ մասին խոսել: Դերասան **Սոս Սարգսյանը** մարդկանց գնահատում է առաջին հերթին «հայրենասեր» ու «հայ» չափանիշերով:

«Ստեփան Կարպիկը շատ-շատ հայ է: Խորհրդային ռեժիմի տարիներին նա հեռուստատեսությունը դարձրեց ազգային, ինչը մեծ սխրանք էր: «Մատենադարան» ֆիլմը նկարահանվեց նրա շնորհիվ: «Զորի Միրոն» կյանքի կոչվեց, որովհետեւ թիկունքում զգում էինք Կարպիկի ամուր ձեռքը: Սրանք իմաստուն եւ առաջնորդ հայի, հայրենասերի գործողություններ էին»:

Հրապարակախոս **Զորի Բալայանը** նրան ճանաչում է 1973-ից: «Սկսվում էր Ղարաբաղյան շարժումը: Ղարաբաղի պատմության, Ցեղասպանության մասին հարցեր էր բարձրացնում, որոնք արգելված էին բաց քննարկման համար: Կարպիկը ժամանակակից է, առանց որի դժվար է պատկերացնել իմ ժամանակը», նկատեց նա:



Մաեստրո **Տիգրան Մանսուրյանն** էլ գնահատում է նրա վաստակը երաժշտության ասպարեզում: «Նա դռները բացեց Սասնա աշխարհից եկած երգերի ուղղությամբ: Խորհրդային Միությունում այդ երգերն արգելված էին: Եվ Սասնա ժողովուրդը կարոտից ելնելով դրանց հարմարեցրել էր քրդական բառեր, եւ երգում էին քրդերենով: Կարպիկը քրդերենը մաքրեց, մեծ ջանք ներդրեց այդ երգերի վերածննդի համար: Մեր մտավորականներից շատերը դեմ եղան, այդ թվում՝ երաժիշտներ: Չէին հասկանում՝ հայկական երգերը մեծ արժեք են եւ պետք էր պահպանել: Կարպիկը լռությունը գիտակցում էր: Այսօր այդ երգերը մեզ հետ են եւ հնչում են հայերեն: Դրա համար պետք է շնորհակալություն հայտնել նրան»:

«Հարգում եմ նրա գրքերը: «Հայոց ցեղասպանության պատմություն» գիրքն առանձնահատուկ նշանակություն ունի, որովհետեւ ուսումնասիրված են բոլոր աղբյուրները, ներառյալ՝ թուրքերի վերաբերմունքն ու կարծիքները Հայոց ցեղասպանության վերաբերյալ», նկատեց գրող-հրապարակախոս **Ռազմիկ Դավոյանը**:

Պատմաբան, օրվա գլխավոր բանախոս **Լավրենտի Բարսեղյանի** բնութագրմամբ «Հայոց ցեղասպանության պատմություն» գրքին հայ ժողովուրդը սպասել է 95 տարի: «Ուշագրավ են հայերի ուծացման մասին դիտարկումները: Համեմատում է հայերի եւ թուրքերի ժողովրդագրական պատկերն ու փաստերով ներկայացնում հայ ժողովրդի թվաքանակի նվազումն ու բռնի ուծացումը՝ այդ կերպ առաջին անգամ հրապարակ իջեցնելով «վիճակագրական ցեղասպանություն» հասկացությունը», ասաց նա՝ հավելելով, որ Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի մասին մատենագիտությունը նույնպես պատկանում է Պողոսյանի գրչին:

Ազգային պետական արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանի** համար գիրքը արժեքավոր է, որովհետեւ անդրադարձել է ոչ միայն Հայոց ցեղասպանության հարցին, այլեւ ներկայացրել է արեւմտահայերի կյանքը, խնդիրները, հայ-քրդական հարաբերությունները:

Օրվա հերոսի ելույթն էլ անկեղծ էր ու հուզիչ. «Քաղաքական կուսակցություններից ամենից վատ գիտեմ ռամկավարների պատմությունը: Դաշնակներին գիտեմ, որովհետեւ միշտ հայհոյում են, հնչակներին գիտեմ, որովհետեւ միշտ մի տեղից մյուսն են փոխվում, ռամկավարներին այնքան էլ լավ չգիտեմ: Ընդամենը երեքին լավ գիտեմ: Տատս սիրահարվել էր Միհրան Տամասյանին: Նա եկավ Հալեպ, հայդուկներն այնտեղ էին, հավաքեց տարավ եւ նրա շնորհիվ Սասունում տարան փայլուն հաղթանակ: Երկրորդ ռամկավարը Պողոս Նուբար փաշան էր: (Նա երբեք կուսակցական չի եղել - խմբ.) Երրորդը՝ Արշակ Չոպանյանը: Նրան բացահայտեցի, երբ Չարենցի մասին աշխատություն էի գրում, սակայն ձեռագիրը շատ վատն էր, հազիվ գլուխ հանեցի: Շնորհակալ եմ այս ուշադրության համար: Չեմ ուզում երկար խոսել», եզրափակեց իր ելույթը՝ հորդորելով պատմության նկատմամբ զգույշ լինել, որ կրկին չվտանգվենք ու ծանր կացության առաջ չկանգնենք:

Վերջում ներկայացվեցին ազգագրական պարեր:

# Սահմանամերձ գյուղերի երիտասարդները բուհերում կսովորեն պետական փոխհատուցմամբ

Երեկ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվում էր կրթական օրենքներում փոփոխությունների մի փաթեթ, որի նպատակն է սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված եւ վերջին տասը տարում մշտապես բնակվող Հայաստանի քաղաքացիների անվճար բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթությունն ապահովող օրենսդրական հիմքեր ստեղծել՝ պետական համապատասխան երաշխիք տրամադրելու ճանապարհով: Եթե այս օրենսդրական նախաձեռնությունն իրականություն դառնա՝ սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերից գործուղվածներին կառավարությունը ուսման վճարի փոխհատուցում կտա: Ըստ նախաձեռնության հեղինակ **Ռուզան Առաքելյանի**՝ այս դեպքում ռեալ հնարավորություն կստեղծվի Հայաստանի սահմանամերձ եւ բարձրլեռնային գոտիները մասնագետներով համալրելու համար, ինչն էլ կնպաստի արտագաղթի ռիսկերի նվազեցմանը:

Կառավարությունն այս օրինագծին դրական եզրակացություն է տվել, արված մի քանի վերապահումները ընդունելի են հեղինակի համար: Ըստ որում՝ գործուղված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր պետք է ամրագրվի, որ ավարտելուց հետո 5 տարի ժամկետով աշխատելու է կառավարության նախատեսած բնակավայրերում, իսկ այս պայմանը չկատարելու դեպքում ավարտած ուսանողը պետք է փոխհատուցի իր ուսման ծախսերը: ԿԳ նախարարի տեղակալ **Արա Ավետիսյանը**, ըստ ԱԺ մամուլի ծառայության, ողջունել է օրենսդրական նախաձեռնությունը, նշելով, որ արդեն 6 տարի իրականացվող կառավարության քաղաքականությունն այսպիսով օրենսդրական նորմ է դառնալու, եւ 10 տարվա բնակության նորմը, որ սահմանվում է նախաձեռնությամբ, նա առաջարկել է մեղմացնել՝ 5 տարի սահմանելով: Հանձնաժողովականների միաձայն «կողմը» ստացած այս նախաձեռնությունը կքննարկվի եկող երկուշաբթի սկսվող քառօրյայում:

Մ. Խ.

# 75 հայ երիտասարդներ Գերմանիայում ուսանելու կրթաթոշակ են ստացել

**Մայիսի 17-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության փոխդեսպան տիկին Մելանի Մոլթմանը 75 հայ կրթաթոշակակիրների կշնորհի DAAD-ի վկայականներ: Կրթաթոշակների այս քանակը թերեւս աննախադեպ էր Հայաստանի համար, քանզի մինչ 2010 թ. այս քանակի կրթաթոշակներ Հայաստանը դեռ չէր ստացել Գերմանիայի պետությունից:**

**DAAD կրթաթոշակները հնարավորություն կընձեռեն հայ ուսանողներին, ասպիրանտներին իրենց կրթությունը շարունակելու Գերմանիայում՝ տարբեր մասնագիտությունների գծով, իսկ գիտնականներին՝ իրենց գիտական հետազոտությունը իրականացնելու գերմանական բուհերում կամ գիտահետազոտական կենտրոններում:**

**DAAD-ն Հայաստանում կրթական ծրագրերի իրականացման համար ամեն տարի 800.000 եվրոյից ավելի գումար է ներդնում եւ դրանով իսկ ակադեմիական փոխանակման բնագավառում խոշորագույն օժանդակողներից մեկն է: Անկախացումից ի վեր ավելի քան 1500 հայեր կրթաթոշակներ են ստացել DAAD-ից. հետազոտական եւ ուսումնական կրթաթոշակներ գերմանական բուհերում ուսումը շարունակելու կամ հետազոտական աշխատանք իրականացնելու, ինչպես նաեւ ամառային դասընթացներին եւ ուսումնական ճանապարհորդություններին մասնակցելու համար: Նշված ժամանակահատվածում DAAD-ն Հայաստանում կրթական ծրագրերի իրականացման համար ներդրել է ավելի քան 8 միլիոն եվրո: DAAD-ն իր կրթաթոշակակիրներին աջակցում է նաեւ կրթաթոշակային ծրագրի ժամկետի ավարտից հետո, մասնավորապես գրքերի եւ տարբեր սարքավորումների ձեռքբերման հարցում, ինչպես նաեւ օժանդակում է կազմակերպել տարբեր սեմինարներ, աշխատանքային խմբեր, նախկին կրթաթոշակակիրների կրկնակի հրավերներ, կազմակերպում է ամառային դպրոցներ Հայաստանում եւ Գերմանիայում:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 12/05/2010 21:22 Page 1



# ՀՀ ԱԳՆ. «Արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան վերադարձավ նախապայմանների լեզվին»

Երեկ Բրյուսելում նախատեսված էր Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ: Հետաքրքրական զուգադիպությամբ կամ գուցե դիտավորությամբ, բայց Ադրբեջանի ԱԳ նախարարը չի հանդիպելու Մինսկի խմբի համանախագահների հետ գուցե նույն այն տրամաբանությամբ, ինչ տրամաբանությամբ Մոսկվայի մայիսի 9-ի տոնակատարություններին մասնակցելու հրավերին մեկ օր շուտ չէր արձագանքել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Ամեն դեպքում, Ադրբեջանի մոտեցումը ԵԱՀԿ Մինսկի խմբին ժամանակ առ ժամանակ քննադատական է դրսեւորվել, որ բովանդակության հետ առանձնակի կապ չունի: Թերեւս այս անգամ էլ Ադրբեջանի ԱԳ նախարարը ՄԽ հետ հանդիպման չի գնում միջնորդական առաքելության առնչությամբ «դժգոհություններից» ելնելով:



Ինչեւէ, Հայաստանի ԱԳ նախարարը երեկ մեկնել է Բրյուսել՝ մասնակցելու «28+1» ձեւաչափով ՆԱՏՕ-ի նիստին, որտեղ անդրադառնալու են Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների պլանի իրագործման ընթացքին:

Իսկ մինչ Բրյուսել մեկնելը, ըստ պաշտոնական տեղեկատվության, **Էդվարդ Նալբանդյանը** մասնակցել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 120-րդ նստաշրջանին, հանդիպել ԵԽ գլխավոր քարտուղար Թյորնբյոր Յագլընդի հետ: Մայիսի 11-ին Ստրասբուրգում Նախարարների կոմիտեի նիստին մասնակցել են ԵԽ անդամ 47 երկրների, 5 դիտորդ երկրների եւ միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակությունները: Օրակարգում Եվրոպայի խորհրդի գործունեության տարբեր ոլորտների հետ կապված հարցեր են եղել՝ Եվրոպայի խորհրդի բարեփոխումները, Եվրոպայի խորհուրդ-Եվրոպական միություն համագործակցությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության արդյունավետության բարձրացումը, այլ հարցեր:

Նստաշրջանի իր ելույթում Հայաստանի ԱԳՆ ղեկավարը Հայաստանի աջակցությունն է հայտնել կազմակերպության բարեփոխումներին՝ նշելով, որ Հայաստանը կշարունակի ակտիվ մասնակցությունը կազմակերպության գործունեությանը, այդ թվում՝ հավելյալ արժեք ստեղծող նախաձեռնությունների միջոցով:

Հայաստանի արտաքին քաղաքականության ղեկավարը, անդրադառնալով Արցախյան հիմնախնդրի կարգավորմանը, նիստում մասնավորապես ասել է. «ԵԱՀԿ ԱԳ նախարարների՝ անցյալ դեկտեմբերին Աթենքում ընդունված ԼՂ վերաբերյալ հայտարարությունը շեշտադրում է ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառումը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, տարածքային ամբողջականությունը՝ որպես հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքներ: Նույն սկզբունքներն ընկած են 2007 թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկած մադրիդյան փաստաթղթի հիմքում»:

Նախարարի խոսքերով, այդ փաստաթղթի գոյությունն անգամ մեկ տարուց ավելի հերքում էր Ադրբեջանը, մինչեւ նրանք վերջապես հայտարարեցին, որ իբր թե ընդունում են այն՝ որոշ բացառություններով: «Եթե փորձենք պարզել, թե ինչին է Ադրբեջանը համաձայնել, ինչին՝ ոչ, ապա կտեսնենք, որ ամենաշատը բացառություններն են, իսկ ընդունված դրույթներն էլ՝ իրենց կամայական ներկայացմամբ: Ադրբեջանը ոչ միայն շարունակում է խեղաթյուրել հակամարտության պատճառները ու հետեւանքները, այլ նաեւ ընթացող բանակցությունների էությունն ու օգտագործում է ցանկացած հնարավորություն բոլոր մակարդակներով ուժի կիրառման սպառնալիքներով հանդես գալու համար», ասել է Նալբանդյանը:

Ելնելով նախորդ տարիների փորձից, ըստ նախարարի, ակնհայտ է, որ ադրբեջանական բոլոր ճիգերը՝ հիմնախնդիրն արծարծելու այլ միջազգային հարթակներում եւ դրանով ազդելու Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունների վրա, ապակառուցողական են: «Չնայած Ադրբեջանի կողմից կարգավորման ճանապարհին ստեղծվող բոլոր խոչընդոտներին, Հայաստանը հաստատակամ է շարունակելու ջանքերը բանակցությունների միջոցով հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ»:

Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին՝ Էդվարդ Նալբանդյանը կրկին շեշտադրել է, որ կարգավորման գործընթացում չեն կարող լինել նախապայմաններ: Ընդ որում, այս դիրքորոշումը կիսում են միջնորդ եւ աջակից երկրները եւ ամբողջ միջազգային հանրությունը:

«Արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան վերադարձավ նախապայմանների լեզվին», նշել է իր ելույթում Նալբանդյանը՝ ավելացնելով, որ այդ իսկ պատճառով Հայաստանի նախագահը որոշեց կասեցնել վավերացման գործընթացը Հայաստանում, մինչեւ Անկարան նորից պատրաստ լինի շարունակելու գործընթացն առանց նախապայմանների:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

# Եվրոպական հարեւանության գծով՝ փոքր առաջընթաց ու շատ անելիքներ

**Եվրոպական հանձնաժողովը երեկ հրապարակել է Եվրոպական հարեւանության քաղաքականության մասնակից երկրների առաջընթացի տարեկան զեկույցը, որում Հայաստանի հետ հարաբերությունների առնչությամբ նշվում է, որ 2009-ին Հայաստանը ԵՀՔ գործողությունների ծրագրով առաջընթաց է ապահովել մի քանի ոլորտներում, մեկնարկել է մարդու իրավունքների երկխոսություն ԵՄ-ի հետ, բարեփոխվել հակակոռուպցիոն օրենսդրական հիմքը եւ ամրապնդվել է մարդու իրավունքների պաշտպանի դերը:**

**Եվրոպական հարեւանության քաղաքականության ամենամյա զեկույցները վերստին ի ցույց են դնում Եվրոպական միության կողմից հարեւաններին տրամադրվող առավելությունները: Հինգ տարի է, ինչ Եվրոպական միությունն ապահովում է առեւտրի եւ օժանդակության ծավալների ավելացում, ժողովուրդների միջեւ շփումների ակտիվացում եւ տնտեսական, քաղաքական ու բազմաթիվ ոլորտային բարեփոխումների շրջանակում ԵՄ-ի եւ հարեւանների միջեւ համագործակցության զգալի սերտացում:**

**Զեկույցի համաձայն, Հայաստանը նաեւ դրական քայլեր է կատարել կարգավորելու ներքին քաղաքական ճգնաժամը, որ հետեւեց 2008թ. նախագահական փետրվարյան ընտրություններին: Ամեն դեպքում, Եվրոհանձնաժողովի զեկույցով Հայաստանը պետք է հետագա ջանքեր գործադրի՝ ապահովելու մարտյան իրադարձությունների առնչությամբ խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի առաջարկությունները, կատարելագործի ընտրական ստանդարտներն ու խթանի մամուլի ազատությունը:**

Ա. Հ.

# «Իմ մոր կողմից քուրդ, իսկ հոր՝ թուրք պապերը բնաջնջեցին մի ամբողջ ժողովրդի»

*1-ին էջից*

**Բիլդիրիջիի հոդվածը խոստովանության բնույթի հուշագրություն է եւ հստակ պատկերացնում է տալիս, թե որ դեպքում մարդասպան հրոսակներն անխնա սպանում էին հայկական ընտանիքի ողջ անդամներին եւ ինչով էր պայմանավորված հայ երեխայի կյանքը խնայելու այս մարդասպանների «մարդասիրությունը», իսկ Բեշիքչին հոդվածում ծնողների սպանությունը տեսած երեխայի՝ գլխավորապես աղջիկ, «փրկությունը» համարում է ոչ թե «մարդասիրություն», այլ՝ ստրկացման միջոցով նրան թուրքացնելու դրսեւորում, որովհետեւ վերցված հայ երեխաները որպես հարճ, աղախին կամ ծառա, ստիպված հոգում էին իրենց ծնողների դահիճների՝ քստմնելի թուրք կամ կիսավայրենի քուրդ ընտանիքների հոգսերը:**

**Քրդական gelawej.net կայքէջում տեղադրված այս հոդվածները, որոնք լրացնում են միմյանց, կարեւոր են հայերի կոտորածներին թուրքական զանգվածների մասնակցությանը եւ հայ երեխաներին «փրկելու» թուրքերի նկրտումներին լույս սփռելու առումով: Մասնակի կրճատումներով նախ ուշադրության ենք ներկայացնում Հասան Բիլդիրիջիի «Հրաձիգ պապերս» հոդվածը: Ահա թե ինչ է գրել.**

**«Մանկությունս անցավ հայկական բնակավայրերի ավերակների եւ հայերի արյունով ներկված հողի վրա: Միջնադարում Խլաթը հայկական ամենափառահեղ քաղաքն էր: Սակայն այն Խլաթում, որտեղ ես եմ ծնվել, հայ չկար: Հայն ընդամենը գոյություն ուներ հայհոյանքներում: Հայրս եւ հորեղբայրներս զայրանալիս ինձ կամ ուրիշներին «հայի վասակ» էին անվանում, եւ նույնն անում էր ողջ գյուղաքաղաքը: Հայրական կողմից ազգականներս, որոնք թուրք էին, Վանա լճի ափին էին բնակվում: Հենց միջնաբերդում՝ հարուստների թաղամասում: Նրանց առանձնատները շքեղ էին, իսկ մերը՝ աղքատ: Հայրս եւ հորեղբայրներս պատմում էին, թե այս թուրք նորահարուստներն ինչպես են սպանել իրենց թաղի հայերին:**

**Հայերից մեկին բռնեցրել են մզկիթի անկյունում, քարով նրա գլուխը փշրել է շեյխ Շահաբեդդինը: Դեպի լիճ փախչող մեկ այլ հայի տեղում գլխատել են: Իսկ պատերն առ այսօր կանգուն հայ ընտանիքի անխտիր բոլոր անդամներին՝ կին, երեխա, խեղդամահ է արել հաջի Օմերի հայրը: Այս մեծ քարի վրա փշրել են գլուխն այն հայ վարպետի, որը թաղամասի շքեղ առանձնատներն է կառուցել:**

**Մեզ պատմել էին, որ հայերին սպանել են այնպես, ինչպես ոչխար են մորթել: Թերեւս դրանով էլ մթագնել են մեր մանկական աշխարհը: Սակայն ինձ առավել տպավորել էր հայկական ավերված մի գյուղ, Խլաթ-Թաթվան ճանապարհի վրա, Խլաթից 10 կմ հեռու: Մի օր փորփրելով գյուղի ավերակները, ծխամորճ գտա, սանր, ապա օսմանյան դրամներ, եւ զգացի, որ այստեղ մի ամբողջ կյանք է թաղված: Հորս հարցրի, խուսափողական պատասխան տվեց: Երբ ես տարված էի գյուղը փորփրելով, հանկարծ հայտնաբերեցի մանկական մի կոշիկ եւ սարսափեցի, կոշիկն իսկույն շպրտեցի ու փախա:**

**Գյուղի մասին նորից հարցրի հորս, ասաց՝ անիծյալ լինես, դա հայկական գյուղ էր, բոլոր բնակիչներին սպանել են: Այդ սպանություններն էլ կատարել էին իմ քուրդ մոր պապերից կազմավորված համիդիե գնդերը: Գյուղի պատմությունը լսելուց հետո, մանկական այդ կոշիկը սկսեց երեխայի պես «լաց լինել», եւ ամեն օր այդ լացի ձայնը հետապնդեց ինձ:**

**Տարիներ անցան, ստիպված հայտնվեցի Փարիզում: 1994 թվականն էր, հանկարծ ծանոթացա տարեց հայ մի կնոջ հետ: Կլիներ շուրջ 90 տարեկան: Իմանալով, որ ես Վանա լճի շրջակայքից եմ, ասաց, որ ինքն էլ այնտեղից է: Հետո պատմեց իր ողբալի պատմությունը, ասելով. «Կոտորածի ժամանակ 13 տարեկան սիրունիկ աղջիկ էի: Բոլորին սպանեցին, իսկ ինձ խնայեցին, որ բռնաբարեն ով ասես, մինչեւ որ Վանա լճից հասա Այնթապ: Չեմ հիշում քանի օր, քանի շաբաթ, քանի ամիս շարունակ... ասում եմ տղամարդկանց»:**

**Սա է պատմությունը: Իմ մայրական կողմից պապերը՝ համիդիե գնդերն ու հոր կողմից թուրք հրաձիգները բնաջնջեցին մի ամբողջ ժողովրդի: Ցեղասպանությունը չի կարող պատճառաբանություններ ունենալ: Իրերի դրությունը չի փոխելու նաեւ քուրդ եւ թուրք պապերիս անունից իմ ներողություն խնդրելը: Մարդկության դեմ հանցագործություն է հաշտվելն այն իշխանությունների հետ, որոնք հաստ քող են քաշում կատարված ցեղասպանության վրա: Ցեղասպանություն կատարածների հետ չեն հաշտվում, այլ նրանցից հաշիվ են պահանջում, որ թոթափեն այդ ամոթանքը»:**

# Դմիտրի Մեդվեդեւ. Հայ-թուրքական գործընթացը «դյուրին չէ»

*1-ին էջից*

«Բնականաբար, այդ գործընթացները հեշտ չեն, դրանք տարբեր արձագանքներ են գտնում, քանի որ, հասկանալի պատճառներով, այս խնդիրը վաղուց չէր լուծվում, բայց այնուամենայնիվ հույս ունեմ, որ վերջիվերջո կողմերը կկարողանան հասնել անհրաժեշտ լուծումներին ու ամբողջապես վերականգնել հարաբերությունները», ասել է Մեդվեդեւը:

ՌԴ նախագահը նաեւ տեղեկացրել է, որ առաջիկայում կկայանա եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարների մասնակցությամբ, որի ժամանակ կքննարկվի ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը: «Ռուսաստանն այստեղ ունի հատուկ առաքելություն: Մենք հակամարտության կողմ չենք, միջնորդ ենք, բայց բավական ակտիվորեն ներգրավված ենք գործընթացում»:

Մեդվեդեւի խոսքերով, կողմերը հանդիպում են, շփվում, եւ իրականում մի շարք հարցերով առկա է առաջընթաց: «Բայց դա չի նշանակում, թե այսօր հասել ենք համաձայնության բոլոր հարցերում: Խորհրդատվությունները շարունակվում են: Ես ոչ մեկ անգամ եմ առաջարկել իմ գործընկերներին նախագահ Սարգսյանին ու նախագահ Ալիեւին իմ միջնորդական ծառայությունները», նշել է ՌԴ նախագահը:

Ռուսաստանն ակնկալում է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահող երկրների ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի ակտիվ դիրքորոշումները: Միաժամանակ Մեդվեդեւն ընդգծել է, որ նախ եւ առաջ «բոլոր հիմնական հարցերը պետք է քննարկվեն հակամարտության մասնակիցների հետ»:

Մեդվեդեւի Թուրքիա այցելության ընթացքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ համատեղ ատոմակայան կառուցելու եւ շահագործելու մասին: Ստորագրվել է նաեւ Ռուսաստան-Թուրքիա անցագրային ռեժիմի վերացման համաձայնագիր, որ կվերաբերի հիմնականում մինչեւ 30 օր ժամկետով երկրից երկիր մեկնողներին:

Ռուսաստանն ու Թուրքիան իրենց տեսակետները բավականին նման են հայտարարել նաեւ մերձավորարեւելյան կարգավորման գործընթացի առնչությամբ: Ռուսաստանն ու Թուրքիան նաեւ համաձայնել են համատեղ աշխատել «համաեվրոպական անվտանգության արդյունավետ ճարտարապետության ստեղծման ուղղությամբ», որի նախաձեռնողը ՌԴ նախագահն է: Մեդվեդեւի այցելությամբ իրականություն դարձավ նաեւ Բարձրագույն մակարդակի համագործակցության խորհրդի ստեղծումը, որի առնչությամբ փաստաթուղթն արդեն ստորագրված է:

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը երեքշաբթի երեկոյան Դամասկոսից էր ժամանել Անկարա: Թուրքական մամուլի տեղեկություններով՝ Մեդվեդեւին ուղեկցող պատվիրակների, գործարարների եւ լրագրողների ընդհանուր թիվն անցնում է 200-ից: «Ռուսական պատվիրակությունը Թուրքիայի մայրաքաղաք է ժամանել չորս օդանավով», տեղեկացնում է Hurriyet-ը:

Ա. Հ.

# Ցավակցություն

Էդվարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Հովհաննես Չեքիջյանը, Հակոբ Ավետիքյանը, Վանիկ Սանթրյանը ցավակցություն են հայտնում Հարություն (Արթին) Հարությունյանին (Հալեպ) նրա կնոջ՝

**Ժակլին Հարությունյանի**

մահվան կապակցությամբ, որը տեղի է ունեցել Հալեպում:

# Վանա «Ֆանֆառը» Հանրապետության հրապարակում...

*«Երաժշտությունը կրկնապատկում, եռապատկում է բանակը»:*

*Ալ. Սուվորով*

Ռազմական գործում եւ մասնավորապես պատերազմում, անչափ կարեւոր է բարոյահոգեբանական գործոնի դերը եւ այդ դերի գիտակցումը: Մարդկությունը վաղնջական ժամանակներից սկսած հասկացել է դրա կարեւորությունը: Ռազմիկի եւ զորքի մարտական ոգին բարձրացնելու համար կիրառվել եւ կիրառվում է ամեն ինչ` տարրական վրեժի զգացումից սկսած, վերջացրած կրոնական զգացումներով ու հավատալիքներով: Պատմությունն ու մշակույթը կարեւորագույն տեղ են զբաղեցնում ոգեղենի ձեւավորման գործում: Մշակույթի բնագավառում էլ իր հերթին անչափ կարեւոր է երաժշտության դերը: Երաժշտությունը հաշված րոպեների ու նույնիսկ վայրկյանների ընթացքում ստեղծում է համապատասխան տրամադրություն եւ հոգեվիճակ. խոսքը միայն զինվորի մասին չէ, այլ` ընդհանրապես մարդու: Որեւէ երգ կամ երաժշտություն կարող է առաջացնել հոգեկան վերելք, անսահման խանդավառություն եւ հակառակը` կարող է առաջ բերել հոգեկան անկում, մելանխոլիա, ընդհուպ ապատիա եւ բարոյալքում: Երաժշտությամբ բուժում են մարդուն, երաժշտությամբ տանջում են մարդուն, երաժշտությամբ սկսվում է դեռեւս լույս աշխարհ չեկած մարդու դաստիարակությունը...

Ինչպես արդեն ասվեց, հնագույն ժամանակներից զինվորական երաժշտությունն իր ուրույն տեղն է ունեցել բանակների առօրյա կյանքում, ինչպես նաեւ պատերազմում: Եգիպտոսի, Ասորեստանի, Բաբելոնի, Իրանի, Չինաստանի, Հնդկաստանի եւ աշխարհի մի շարք այլ հնագույն երկրներում զինվորական երաժշտությունը լայնորեն կիրառվում էր ճակատամարտերի եւ բանակային արարողությունների ժամանակ: Հին Եգիպտոսում եւ Հին Չինաստանում զինվորական երգացանկում լայնորեն ընդգրկված էին նաեւ խմբերգեր:

Ք. ա. 5-րդ դարի հույն պատմիչ Թուկիդիդեսի վկայությամբ, մակեդոնական զորքերում շատ հարգի էր ֆլեյտան, որի հնչյունների տակ բանակն առաջ էր շարժվում հանգիստ` առանց պոռթկումների: Կարթագենցիների մոտ այդ նպատակին ծառայում էր կիթառը, հռոմեացիների մոտ` եղջերափողն ու շեփորը: Հարձակման ժամանակ հիշյալ բանակներում, ինչպես եւ կարելի էր սպասել, ավելի շատ օգտագործում էին աղմկող երաժշտական գործիքներ` մասնավորապես թմբուկներ: Համատարած սարսափ էր ներշնչում այսպես կոչված բարբարոսների, հատկապես ռազմատենչ գերմանների զինվորական երաժշտությունը:

Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում զգալիորեն ուժեղացավ զինվորական երաժշտության հասարակական, կազմակերպչական դերը պետական եւ քաղաքացիական կյանքում. մեծապես աճեց ռազմերգի դերը նաեւ մարտադաշտում: Այդ ամենի թագն ու պսակը բնականաբար Ռուժե դը Լիլի հեղինակած «Մարսելյեզն» էր (թարգմանաբար` Մարսելցիների քայլերգ), որը սկզբում դարձավ ֆրանսիական հռենոսյան բանակի, իսկ հետո նաեւ հեղափոխական Ֆրանսիայի պետական օրհներգը: «Մարսելյեզի» եւ հեղափոխական այլ քայլերգերի տպավորիչ հնչյունների տակ էին ֆրանսիական հեղափոխական, իսկ ապա նաեւ նապոլեոնյան զորքերը գնում գրոհի եւ նվաճում հաղթանակ հաղթանակի հետեւից:

Աշխարհի մեկ այլ ռազմական տերությունում` Ռուսաստանում, 18-19-րդ դարերը նույնպես դարձան զինվորական նվագախմբերի ոսկե դարը: 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում, Կովկասյան ճակատում մարտնչող ռուսական զորքերը, որոնց հիմնականում ղեկավարում էին հայազգի զորավարները, նույնպես գրոհի էին նետվում եւ թուրքական ամրոցները գրավում ռուսական քայլերգերի եւ թմբուկների դղրդի ներքո:

20-րդ դարում զինվորական երաժշտությունը կորցնում է իր նախկին դերը մարտի դաշտում, որը բացատրվում էր ռազմական տեխնիկայի նոր տեսակների կիրառումով եւ համապատասխանաբար մարտի աղմուկի, թոհուբոհի այնպիսի ուժեղացումով, որն անարդյունավետ եւ ավելորդ էր դարձնում ռազմական քայլերգերը մարտի ընթացքում: Մարտավարական փոփոխություններն ու նորամուծություններն իրենց հերթին անկիրառելի էին դարձնում զինվորական երաժշտությունը ռազմական գործողությունների ընթացքում:

Քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում ( 1918-1921թթ.) կարճ ժամանակով վերածնեց ռազմական երգը մարտի դաշտում: Սպիտակ բանակների դեմ մղվող պայքարում բոլշեւիկները լայնորեն եւ հաջող կերպով կիրառում էին հեղափոխական երգեր` մասնավորապես «Ինտերնացիոնալը»: Հայրենական մեծ պատերազմի ընթացքում խորհրդային հրամանատարությունը, առանձին դեպքերում, նույնպես օգտագործում էր զինվորական երաժշտությունը ռազմական գործողությունների ընթացքում:

Պատերազմից հետո ռազմական երգը վերջնականապես եւ ընդմիշտ դուրս մղվեց մարտադաշտից: Փոխարենը բանակային խաղաղ առօրյայում նաեւ լիովին պահպանել է իր դիրքերը, եւ կարծում ենք, դեռ էլի շատ ու շատ երկար կծառայի զորքերի ուսուցման եւ մարտական ոգու ամրապնդման գործին:

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում նույնպես ռազմական գործին է ծառայեցրել զինվորական երգն ու երաժշտությունը:

Հայոց պետականության անկումից հետո, երբ մենք արդեն չունեինք արքայական եւ նախարարական զորքեր, ռազմական երգ-երաժշտության անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, պահպանվեց: Այժմ այն արդեն ծառայում էր օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած ազգային ազատագրական պայքարին: 19-րդ դարի 2-րդ կեսին եւ 20-րդ դարի սկզբին, երբ Արեւմտյան Հայաստանում օսմանյան բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը մեծ վերելք ապրեց, ընդլայնվեց նաեւ մեր հայրենասիրական եւ ռազմական երգերի ցանկը: Այդ ժամանակ ստեղծված երգերի ու քայլերգերի մի զգալի մասը («Տալվորիկ», «Մեր Հայրենիք», «Անդրանիկին», «Զեյթունցիների քայլերգ», «Խանասորի քայլերգ», «Զարթնիր, լաո» եւ այլն) կազմում է մեր ռազմահայրենասիրական երգ-երաժշտության ոսկե ֆոնդը: Ռազմերգերից մեկ-երկուսն էլ, օրինակ` «Զեյթունցիների քայլերգը», կարծում ենք, կարող են դասվել աշխարհի լավագույն զինվորական քայլերգերի շարքը: Հետագայում` խորհրդային ժամանակաշրջանում եւ մասնավորապես Մեծ հայրենականի տարիներին ստեղծվեցին նոր լավ երգեր ու քայլերգեր:

Արցախյան ազատամարտում հայ ռազմահայրենասիրական երգը նույնպես ներկա էր: Ընդ որում` շատ կարեւոր դերակատարություն ունեցավ: Այդ պատերազմում գրեթե ամեն ինչում զիջելով հակառակորդին, հայկական կողմն ուներ մի անվիճելի առավելություն` նրա մարտական ոգին պատերազմի սկզբից մինչեւ վերջ շատ ավելի բարձր էր, քան ազերի թուրքերինը: Իսկ այդ ոգու բաղկացուցիչներից մեկն էլ ինչպես արդեն ասվել է, մեր հին ու նոր լավագույն ռազմերգերն էին: Հիշենք... 1991թ. ապրիլի 30-ին, Մարտունաշենում (Հյուսիսային Արցախ), «Արաբո» ջոկատի եւ Կարոտի խմբի նահանջն ապահովելիս, գնդացրային փոթորկալի կրակ բացելով զրահատեխնիկայով հարձակվող խորհրդային զորքերի վրա, «Արյունոտ դրոշը» շուրթերին իր վերջին մարտը մղեց արաբոյական Դեղը` Սիմոն Աչիկգյոզյանը` Արցախյան ազատամարտի նվիրյալներից մեկը: Հիշենք...Գրոհի ելնելիս կամ հանգստանալիս, հայ ազատամարտիկներին «Գարահիսարով» ու «Տալվորիկով» էր գոտեպնդում Մակիչը-Մկրտիչ Մկրտչյանը` ազատամարտի եւ հայ ռազմի երգի նվիրյալը: Հիշենք...

Այժմ, դառնալ մի փոքր հետ գնանք մեր պատմության ամենաճակատագրական տարեթիվը` 1915-ը: Համընդհանուր արնագույն ֆոնի վրա այն ունի նաեւ լուսավոր կետեր: Դրանք թուրք բարբարոսների դեմ արեւմտահայության մղած ինքնապաշտպանական հերոսամարտերն են, որոնցից ամենախոշորը եւ ամենափառահեղը անշուշտ Վանի հաղթական հերոսամարտն է: Վան-1915-ի Ապրիլը մեր չփակվող վերքի քիչ սպիներից մեկն է: Բայց մեր խոսքը մեկ ամիս տեւած կենաց ու մահու կռիվների մասին չէ, այլ` Վանա հռչակավոր «Ֆանֆառի»:

Վանա «Ֆանֆառը», կամ այլ կերպ ասած` փողային նվագախումբը կազմավորվել էր դեռեւս առաջին աշխարհամարտից առաջ` Վանի Վարժապետանոցում: Հովհաննես Բուջիկանյանի ղեկավարած այդ նվագախումբը բաղկացած էր Վարժապետանոցի սաներից եւ շատ ակնառու դեր էր խաղում Վանի ազգային-հասարակական կյանքում: Քաղաքի բոլոր կարեւոր միջոցառումների զարդն էր «Ֆանֆառը»: Ապրիլյան հերոսամարտի ժամանակ, «Ֆանֆառը» առաջին օրից մինչեւ վերջին օրը (1915թ. ապրիլի 7-մայիսի 3) իր պատվավոր տեղն ունեցավ պայքարի առաջին գծում: Այդ մասին եղած բազմաթիվ վկայություններից բերենք ընդամենը երկուսը, որոնց հեղինակները հերոսամարտի մասնակիցներն են: Եվ այսպես, խոսքը տանք Արմենակ Փոխարյանին.

«Պատկերը լրիվ անելու համար պիտի հիշատակել նաեւ Հովհաննես Բուճիկանյանի պատրաստած նվագախումբը` «Ֆանֆառը», կազմված Վարժապետանոցի մի խումբ աշակերտներից, որոնք հասնում էին մեր ամենավտանգված դիրքերը ու իրենց աշխույժ նվագով ոգեւորում ու եռանդ ներշնչում մարտիկներին: «Ֆանֆառը» կռվի սկզբից մինչեւ վերջը դարձավ Այգեստանի խանդավառ ոգին»:

Առավել տպավորիչ է Մկրտիչ Սահակյանի տված գնահատականը.

«Իսկ Վարժապետանոցի փառապսակը եղավ անոր կազմակերպած մյուզիքը: Թուրք կառավարությունը մյուզիք չուներ, իսկ հայերը ունեցան: Երեւակայեցեք ատոր ազդեցությունը թուրքերու վրա: Անոնք հայ մարտիկներու գնդակներեն ավելի` կսոսկային, կջղագրգռվեին հայկական մյուզիքի գոռ որոտումներեն: Ճեվտեթ փաշան իր այդ գրգռումը չէր ծածկած իր նամակներեն մեկուն մեջ: Իսկ մյուզիքի առաջ բերած ոգեւորությունը հայ մարտիկ շարքերու եւ ժողովուրդի բոլոր խավերուն մեջ`ամբողջ ամիս մը` հասավ իր ամենաբարձր գագաթին: Ամբողջ կռվի ընթացքին` հայկական «Ֆանֆառը» շեփորեց վրեժի, պատվի եւ հաղթանակի ռազմերգեր: Ամենածանր վտանգներու ժամանակ` ան ռազմիկներուն օգնության հասավ, երիտասարդները հուզեց, մայրերու աչքերեն արցունքներ քամեց եւ պահեց հայու ոգին անընկճելի, մինչեւ հաղթանակի վերջին օրը:

Պատիվ Վանի Վարժապետանոցի ընտանիքին»:

Մայիսի 6-ին, երբ Վան էին մտնում ռուսական զորքերի ավանգարդում հարձակվող հայ կամավորական դրուժինաները, քաղաքի մատույցներում նրանց դիմավորելու դուրս եկած հազարավոր քաղաքացիների ու աշխարհազորային մարտիկների հետ էր նաեւ «Ֆանֆառը»: Բերկրանքի ու ցնծության համատարած աղաղակների եւ հրացանային համազարկերի ներքո, նա մի անգամ եւս թնդացրեց «Մեր Հայրենիքը», այժմ արդեն որպես հերոսամարտի հաղթական ավարտն ազդարարող խորհրդանիշ:

Կարծում ենք, բերված օրինակները բավական են պատկերացում կազմելու Վանի ապրիլյան հերոսամարտում Վանա «Ֆանֆառի» դերակատարության մասին:

Իսկ այժմ, ինչպես ասում են` գործին ավելի մոտիկ:

Մենք շատ ենք խոսում մեր պատմական հիշողության, մեր պատմական անցյալի հերոսական դրվագներն արժեւորելու, անցյալը ներկային ծառայեցնելու եւ նմանատիպ այլ բաների մասին: Կարծում ենք, Վանի 1915 թ. ապրիլյան փառապանծ հերոսամարտի հանդեպ մեր հարգանքի, մեր վերաբերմունքի լավագույն դրսեւորումներից մեկը կլիներ նաեւ այն, որ մեր նորաստեղծ բանակի տարբեր միավորումների եւ զորամասերի փողային նվագախմբերի միջեւ կազմակերպվեր ամենամյա մրցույթ: Մրցույթ, որը կրեր «Վանա Ֆանֆառ» անվանումը: Մանավանդ որ ռազմական հարուստ ավանդույթներ ունեցող եւ այդ ավանդույթները հարգող մի շարք երկրներ անցկացնում են նման մրցույթներ: Խորհրդանշական եւ իմաստավորված կլիներ հոգեւոր կապ ստեղծելու 1915-ի հերոսամարտերի դափնեպսակը կազմող Վանի ապրիլյան հերոսամարտի եւ մեր օրերի պատմության առանցքը կազմող Արցախյան ազատամարտի միջեւ: Կարծում ենք, արցախյան պատերազմի բոցերում ծնված մեր հաղթական բանակը եւ բազում դժվարություններ տեսած ու հաղթահարած մեր ժողովուրդը արժանի են մեր երկրի գլխավոր` Հանրապետության հրապարակում, յուրաքանչյուր տարվա մայիսի սկզբին վայելելու հայկական զինվորական նվագախմբերի ցուցադրական ելույթների պարգեւած հաճույքը: Դրանով մեր ժողովուրդը կունենար եւս մեկ շատ սիրված տոն:

Մայիսը մեր ժողովրդի հին ու նոր հաղթանակների ամիսն է: Արժեր, որ մեր վառոդաբույր ռազմերգերն ու քայլերգերը թնդային մեր հրապարակում: Դրանով նաեւ Հայաստանի ներկա մայրաքաղաք Էրեբունի-Երեւանը հարգանք ու պատիվ մատուցած կլիներ հայոց առաջին մայրաքաղաք Տուշպա-Վանին: Դա կլիներ հայ ոգու մի իսկական խրախճանք` «Ի հզորություն Բիայնա-Հայաստան երկրի եւ ի սարսափ նրա թշնամիների»:

ԱՐԵՎԻԿ ԳԱՓՈՅԱՆ

ՏԵՍԱԿԵՏ

## Պատերազմի վտանգը եւ հայ քաղաքագետները

**Վերջին ամիսներին հայ քաղաքական իրականության մեջ ամենաշրջանառվող թեման Ղարաբաղյան նոր պատերազմի վերսկսման մասին խոսակցություններն են: Հիմնական հարցը թերեւս հնչի այսպես` բարոյակա՞ն է արդյոք հարցի քննարկումը ընդհանրապես եւ ինչ առնչություն ունի իրականության հետ: Ընդհանրապես հնարավոր պատերազմի մասին բարձրաձայնելը, ինչը վերջին շրջանում անում են տարբեր տրամաչափի քաղաքական գործիչներ եւ իրենց վերլուծաբան ու քաղաքագետ համարող տարբեր մարդիկ, ոչ միայն բարոյական չէ, այլեւ զուրկ է որեւէ հիմքից: Պատերազմի մասին խոսակցությունները միայն ավելորդ լարվածություն են ստեղծում հայ հասարակության մեջ, իսկ պատերազմ տեսած եւ այդ բովով անցած մարդկանց համար այդ թեման չի կարող զուտ քննարկումների եւ տեսական մտավոր մարզանքների արանքում լինել: Նման խնդրի բարձրաձայնումը, առավել եւս, դեմքի լուրջ արտահայտությամբ դրա մասին խոսելու համար ոչ միայն բարոյական, այլեւ տարրական մտավոր ընդունակություններ են պետք, ինչն այդ հարցը բարձրացնողներից շատերի մեջ խիստ բացակայում է: Այս ամենը առավել եւս անբարոյական է, երբ դա արվում է քաղաքական կամ անձնական, ասենք, սեփական անձը, որպես քաղաքագետի, կարեւորելու նկատառումներից ելնելով:**

**Այնուամենայնիվ, բոլորին էլ հետաքրքրում է, թե ինչ պայմանների դեպքում է հնարավոր պատերազմը: Հարավային Կովկասի առանձնահատկությունը թերեւս այն է, որ այստեղ պատերազմները սկսվել եւ ավարտվել են կայսրությունների հզորացման եւ անկման շրջանում: Ղարաբաղյան շարժումն էլ սկսվեց, որովհետեւ ԽՍՀՄ-ը թուլանում էր, իսկ լայնածավալ մարտական գործողությունները սկսվեցին միայն Խորհրդային Միության փլուզումից հետո: Այսինքն` Հարավային Կովկասում խաղաղության պահպանման համար միշտ էլ կարեւոր են եղել տարածաշրջանով հետաքրքրված երրորդ ուժի` տերության, անկախ նրա անունից, քաղաքական կամքը եւ ցանկությունը` հաստատել իրենց կողմից վերահսկելի` խաղաղ իրավիճակ: Սա, իհարկե, չի նշանակում, թե տարածաշրջանի երկրները դերակատարություն չունեն, եւ խաղաղությունը եւ պատերազմը սկսվում են մեծ տերությունների կամքով: Սակայն տերությունները միշտ էլ հաշվի են առնում այն քաղաքական իրականությունը, որը հաստատվել է տարածաշրջանում, նաեւ կարեւորում են երկրների քաղաքական վերնախավի կամքը եւ ցանկությունը` ակտիվ դեր կատարել տարածաշրջանում, պահպանելով ձեռք բերվածը: Այսինքն` խաղաղության պահպանման համար ստեղծված իրավիճակը` status quo-ն այն իրողությունն է, որը հաշվի են առնում տերությունները` ելնելով ուժերի դասավորությունից: Ներկայումս ուժերի դասավորությունը եւ տերությունների շահերն ու նրանց քաղաքական եւ տնտեսական իրավիճակը հուշում են, որ վերջիններս շահագրգռված չեն նոր ռազմական բախում թույլ տալու գործում: Բացի դրանից, նրանց համար կա երկրորդ իրողությունը` պատերազմի գործողությունների ժամանակ իրավիճակի զարգացման անկանխատեսելիությունը, եւ վերջապես երրորդ` Բաքվում իշխանափոխության հնարավորությունը ռազմական առաջին իսկ պարտության դեպքում: Այս փաստերը հուշում են, որ տեսանելի ապագայում պատերազմի հնարավորության մասին խոսելը ոչ միայն իրատեսական չէ, այլեւ անբարո է, եւ դրանք ընդամենը դատարկ մարդկանց համար մտավարժանքներ անելու եւ սեփական հեղինակությունը բարձրացնելու փորձեր են:**

ԱՐՍԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Արմենական-ՌԱԿ փոխատենապետ

AZG NEW PDF.qxd 12/05/2010 21:22 Page 1



# Պե՞տք է դատապարտենք «Միության եւ առաջադիմության» կոմիտեի գործողությունները

Թուրքական «Թուդեյ'զ Զաման» օրաթերթի մայիսի 2-ի համարում վերոնշյալ խորագրի ներքո ծավալուն հոդված է ստորագրել զինվորական ատյանի նախկին դատավոր, այժմ թոշակառու, դոկտ. **Ումիտ Քարդաշը**: Հոդվածը բաժանված է հինգ մասի: Առաջինում հեղինակը ներկայացնում է «Ցեղասպանություն» բառեզրը որպես «ոճրագործությունների ոճրագործությունը» եւ տալիս է լեհական հրեա իրավաբան **Ռաֆայել Լեմկինի**` բառեզրը հորինելու հանգամանքները, նշելով, որ Մ. Նահանգներ փախչելուց հետո (Լեհաստանի 1939 թվի նվաճումից հետո) նա նշանակվել է խորհրդական Նյուրնբերգյան դատավարության ժամանակ եւ այդ ժամանակ էլ իմացել համակենտրոնացման ճամբարներում իր ծնողների մահվան մասին: Լեմկինը մահացել է 1959 թվականին 59 տարեկանում, եւ նրա գերեզմանի վրա մարդիկ դրոշմել են «Ցեղասպանության կոնվենցիայի հայրը» մակագրությունը:

Հոդվածի երկրորդ մասը վերնագրված է «1843-1908-ի ժամանակաշրջան», որտեղ նկարագրվում է նախ Բեդիրհան Բեյի ղեկավարությամբ Աշիտայի (Հոլուդ, Հաքքարի սանջաքին կցված) ժողովուրդներին (մեծ մասամբ հայեր եւ նեստորականներ) բնաջնջելու, ապազինելու եւ Զաբ գետում խեղդամահ անելու գործողությունները 19-րդ դարի 80-ականների կեսերին, իսկ այնուհետեւ համիդիեների գոյառումը սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի օրոք եւ նրանց հրահանգված վայրագությունները «անհավատների» նկատմամբ:

«1908-1914-ի ժամանակաշրջան» խորագրով երրորդ բաժնում հեղինակը խոսում է երիտթուրքերի հայտարարած «հավասարություն, ազատություն եւ եղբայրություն» կարգախոսներին արեւմտյան երկրների եւ նաեւ տեղացի հայերի ընձեռած հավատի ու դատապարտության մասին: Ավելանում են մարդասիրական օժանդակությունները, դպրոցներ են բացվում, սակայն 1909-ի ապրիլի 14-ին Ադանայում ծայր է առնում կոտորածների նոր ալիքը: Ապա երեք տարվա հարաբերական անդորրից եւ Բալկանյան առաջին պատերազմում պարտվելուց հետո թուրքական «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությունը տապալում է կառավարությանը (Բաբ-ի-Ալիի շուրջկալումը) եւ սկսում իրականացնել ազգաբնակչությունը միատարր դարձնելու ծրագիրը: Դրան օժանդակում են բանտերից ազատ արձակված գողավազակներից Թալեաթ փաշայի կազմած «Թեշքիլաթ-ի-մահ-սուսա»` հատուկ ջոկատները, որոնք դրվում են 3-րդ բանակի տրամադրության տակ:

Չորրորդ` «1915-16 թվերի բռնի տեղահանությունները» մասում անդրադարձ կա պանիսլամական քաղաքականությանը գերմանական դատապարտություն ցուցաբերելու ապեստալի հետեւանքների մասին:

«Տեղահանությունը վերաբնակեցում չէր կարող համարվել, որովհետեւ վերջնակետը ապրելու պիտանի վայր չէր, եւ շատ քչերն էին տեղ հասնում: Շատերին տեղնուտեղը էին սպանում կամ էլ ճանապարհին, որն ստիպում էին նրանց անցնել ոտքով», գրում է Քարդաշը: Նա նաեւ մեջ է բերում բրիտանացի սոցիոլոգ Դեյվիդ Գաունտի խոսքերը, որ բռնի տեղահանության նպատակը որոշակի էթնիկական բնակչությանը որոշակի էթնիկական տեղանքից դուրս բերելն էր:

«Հայերի բարձր մշակույթն ու քաղաքակրթվածությունն էլ ավելի ընդգծեցին նրանց դեմ իրագործված վայրագությունների աստիճանը աշխարհի ժողովուրդների աչքերին: Թալեաթ փաշան հանգեց սխալ եզրակացության` նշելով, «Հայկական հարց այլեւս գոյություն չունի», այս բառերով է չորրորդ մասը ավարտում հեղինակը եւ անցնում «Եզրակացություններ եւ առաջարկություններ» վերջին` հինգերորդ մասին, որը թարգմանաբար ներկայացնում ենք ամբողջությամբ»:

«Վերոնշյալ հաշվետվությունը չի կարող պատշաճ կերպով ներկայացնել, թե ինչ կատարվեց իրականում: Վայրագություններն ու կոտորածները ոչ միայն կանոնավորապես լուսաբանվել են եվրոպական եւ ամերիկյան թերթերում, այլեւ վկայակոչվել Բրիտանիայի, Ամերիկայի, նույնիսկ Գերմանիայի եւ Ավստրիայի (որոնք Օսմանյան կայսրության դաշնակիցներն էին) եւ օսմանյան զինվորական ատյանների պաշտոնական (դիվան-ի-հարբի) արձանագրություններում, փաստաթղթերում, ինչպես նաեւ դիվանագետների եւ միսիոներների նկարագրություններում:

Ոչ մի արդարացում, ոչ իսկ այն փաստը, որ որոշ հայկական խմբավորումներ ըմբոստացել եւ համագործակցել են օտար երկրների հետ, չի կարելի գտնել մարդկային այս ողբերգության համար: Կատարվածը նույնիսկ Ցեղասպանությանն առնչելն է մոլորեցնող, քանի որ այդ բառը սոսկ իրավական եւ տեխնիկական եզր է, իսկ նման եզրերը չեն կարող ընդգրկել այն, ինչ աննկարագրելի է: Վայրագություններն ու կոտորածներն անհամատեղելի են մարդկային արժեքների հետ:

Որեւէ վարչակարգ, որ հիմնվում է իրականությունը թաքցնելու եւ ժխտելու սկզբունքների վրա, տվյալ պետությունն ու հասարակությունը դարձնում է հիվանդագին եւ անկումային: Թուրքիայի քաղաքագետները, մտավորականները (ակադեմիական աշխատողները), պատմաբանները, լրագրողներն ու կրոնավորները պարտավոր են հասարակությանը դեմ առ դեմ կանգնեցնել ճշմարտությանը: Մենք պետք ու հարգանք չենք կարող ձեռք բերել դատապարտելով մեր նախնիներին, ովքեր պատասխանատու էին այս ողբերգությունների համար: Մարդկային եւ էթնիկական առումով սխալ է դատապարտել գործողությունները Աբդուլ Համիդ Բ-ի, «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի գլխավոր անդամների եւ նրանց հետ համագործակցող խմբավորումների, հրոսակախմբերի եւ ավազակների: Թուրքիան պետք է աշխարհին հայտարարի, որ ընդունում է նշված վայրագություններն ու կոտորածները եւ այդ առնչությամբ ճշմարտության, արդարության եւ մարդկայնության բարձրագույն արժեքներին հավատարիմ մնալով դատապարտի մտածելակերպն ու գործողությունները բոլոր նրանց, ովքեր անցյալում գործել են այդ արարքները:

Դրանից հետո Թուրքիան պետք է հրավիրի Սփյուռքում ապրող բոլոր հայերին, դառնալու Թուրքիայի Հանրապետության քաղաքացիներ: Նրանց վերադարձը դեպի իրենց աշխարհագրական վայրը, որտեղ նախքան բռնի տեղահանվելը եւ իրենց ունեցվածքն ու հիշողությունները թողնելը նրանց նախնիները ապրել են հազարավոր տարիներ, գուցե ծառայի մեղմելու նրանց վիշտը, որն այժմ բարկության է վերածվել: Հայաստանի հետ ընդհանուր սահմանը պետք է բացվի առանց որեւէ նախապայմանի:

Սա է այն, ինչ մեզ թելադրում է անել մեր խիղճը, մարդկայնությունը եւ առողջ դատողությունը: Հայերի վիշտը թեթեւացնելով եւ ձերբազատվելով իր բարդույթներից, երկյուղներից եւ մտահոգություններից` Թուրքիան կդառնա ազատ ու անկախ»:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# Լիբիական ջախջախված օդանավում փրկվել է մեկ երեխա

Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում երեկ առավոտյան կործանվել է Afriqiyah Airways ավիաընկերության պատկանող A330 աերոբուսը: Աղետի հետեւանքով զոհվել է 103 մարդ: Ողջ է մնացել 1 ուղեւոր` հոլանդացի 8-ամյա մի տղա: Այդ մասին ԶԼՄ-ներին հայտնել են օդանավակայանի աղբյուրները:

ԱՄԷ-ում գործող «Ալ Արաբիա» միջարաբական հեռուստաալիքի տվյալներով, աերոբուսը ջախջախվել է Տրիպոլիի օդանավակայանի շրջանում: 92 ուղեւորներից բացի, զոհվել են անձնակազմի 11 անդամները: Վերջիններս Լիբիայի քաղաքացիներ էին:

Տեղական ժամանակով ժամը 6-ին վայրէջքի պատրաստվող օդանավն ընկել է եւ ջախջախվել: «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը ընդգծում է, որ այդ պահին աղետին նպաստող որեւէ ակնհայտ նշան չի եղել. աերոբուսը փաստորեն նոր էր:

Նախնական տվյալներով, աղետի պատճառը օդաչուի սխալն էր: BBC-ն նշում է, որ վերջին օրերին Տրիպոլիում արեւոտ եւ պայծառ եղանակ է, եւ վատ տեսանելիության մասին խոսք լինել չի կարող:

Լիբիացի պաշտոնական անձինք հայտարարել են, որ օդանավն ընկել է Տրիպոլիում վայրէջք կատարելուց ընդամենը 10 րոպե առաջ: Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ աերոբուսը Յոհաննեսբուրգից (ՀԱՀ)



թռչում էր Լոնդոն եւ նախատեսված վայրէջք պետք է կատարեր Տրիպոլիում:

The Bali Times հրատարակության տվյալներով, Afriqiyah Airways ընկերությունը հիմնվել է 2001-ի ապրիլին եւ սկզբում ամբողջապես պատկանել է Լիբիայի պետությանը, բայց հետագայում բաժնետոմսերի մի մասն անցել է Libya-Africa Investment Portfolio ընկերությանը:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

# Դեւիդ Կեմերոնը` նոր վարչապետ

## Բրաունը հրաժարական է տվել

**Պահպանողական կուսակցության առաջնորդ Դեւիդ Կեմերոնը չորեքշաբթի վաղ առավոտյան դարձել է Մեծ Բրիտանիայի նոր վարչապետը: BBC-ն հաղորդում է, որ նախորեին` մայիսի 11-ի երեկոյան հրաժարական էր տվել վարչապետ Գորդոն Բրաունը: Դրանով իսկ վերջ է դրվում երկրում Լեյբորիստական կուսակցության 13-ամյա իշխանությանը:**

**Մայիսի 6-ի ընդհանուր ընտրություններում պահպանողականները հաղթեցին, սակայն տեղերի բացարձակ մեծամասնություն չապահովե-**



**ցին խորհրդարանի Համայնքների պալատում («Ազգը» գրել է այդ մասին): Ուստի պահպանողականները կոալիցիոն կառավարություն կազմելու նպատակով բանակցություն սկսեցին ընտրություններում 3-րդ տեղը գրաված Լիբերալ-դեմոկրատական կուսակցության հետ: Երեկ առավոտյան հայտնի դարձավ, որ լիբերալ-դեմոկրատների առաջնորդ Նիկ Քլեգը նշանակվել է փոխվարչապետի պաշտոնում:**

**Բրիտանական լրատվամիջոցների տվյալներով, կոալիցիոն կառավարության մեջ լիբերալ-դեմոկրատները կունենան 5 նախարար, 15 ուրիշներ էլ կմտնեն կառավարության աշխատակազմի մեջ: Որոշ տեղեկությունների համաձայն, կրթության նախարարի պաշտոնը կզբաղեցնի լիբերալ-դեմոկրատ Դեւիդ Լոուսը:**

**Ինչ վերաբերում է պահպանողականներին, 43-ամյա Դեւիդ Կեմերոնը ամենաերիտասարդ բրիտանացի վարչապետն է վերջին շուրջ 200 տարվա ընթացքում: Նա արդեն մի քանի նշանակում է արել: Արտգործնախարարի պաշտոնում նշանակվել է պահպանողականների նախկին առաջնորդ Ուիլյամ Հեյգը: Ֆինանսների նախարար է դարձել Ջորջ Օսբորնը, պաշտպանության նախարար` Լիամ Ֆոքսը: Թե ո՞վ կդառնա ներքգործնախարար, առայժմ հայտնի չէ:**

**Պահպանողականների եւ լիբերալ-դեմոկրատների կոալիցիոն համաձայնագրով մասնավորապես նախատեսվում է 50 օրվա ընթացքում ընդունել արտակարգ բյուջե, ըստ որի ծախսերը պետք է կրճատվեն 6 մլրդ ֆունտով: Լիբերալ-դեմոկրատները պատրաստ են հրաժարվել այսպես կոչված «առանձնատների հարկ» մտցնելու պահանջից: Պահպանողականներն իրենց հերթին խոստանում են հարկման ենթակա ժառանգության շեմը չբարձրացնել մինչեւ 1 մլն ֆունտի: Լիբերալ-դեմոկրատները նաեւ չեն պահանջի, որ համաներում շնորհվի անօրինական ներգաղթյալներին:**

# Եգիպտոսում 1981-ից գործող արտակարգ դրությունը երկարաձգվեց

**Եգիպտոսի խորհրդարանը երկու տարով երկարաձգել է 1981-ից երկրում գործող արտակարգ դրության օրենքի գործողությունը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երկարաձգման օգտին արտահայտվել են 308, դեմ` 103 պատգամավորներ: 43 պատգամավոր չի քվեարկել: Օրենքը կիրառկվելու է 2010-ի հունիսի 1-ից մինչեւ 2012-ի մայիսի 31-ը:**

**Կառավարությունը խոստանում է բացառիկ միջոցներ ձեռնարկել միայն ահաբեկչության եւ թմրադեղերի առեւտրի հետ կապված անձանց նկատմամբ: Գաղտնընթերցում, ԶԼՄ-ների գրաքննություն, առանձին շրջանների մեկուսացում եւ բռնագրավում թույլատրող նորմերը չեղյալ են հայտարարված:**

**Իրավապաշտպանները կտրականապես դեմ են արտակարգ դրության ռեժիմին, որը երկրում հաստատվեց 1981-ին` նախագահ Անվար Սադաթի սպանությունից հետո եւ մինչեւ օրս անընդհատ երկարաձգվում է: Հիասթափություն է արտահայտել նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտը` հիշեցնելով, որ արտակարգ դրության պահպանումը հակասում է Եգիպտոսի իշխանությունների խոստումներին:**

**Նախագահ Հոսնի Մուբարաքի (նրա կուսակցությունը վերահսկում է խորհրդարանը) ընդդիմախոսները նշում են, որ հատուկ ռեժիմի պատճառով առանց մեղադրանքի ներկայացման Եգիպտոսի բանտերում մնում են հազարավոր մարդիկ, արգելված է արտախորհրդարանական կուսակցական գործունեությունը, իսկ իրավապահ մարմիններն օգտվում են չափազանց լայն լիազորություններից:**

# ԿԺԴՀ-ն յուրացրել է ջերմամիջուկային սինթեզը

**Հյուսիսկորեացի գիտնականները յուրացրել են ջերմամիջուկային սինթեզի տեխնոլոգիան: Այդ մասին հաղորդում է հարավկորեական Յոնհափ գործակալությունը` վկայակոչելով ԿԺԴՀ պաշտոնական լրատվամիջոցներ:**

**Հյուսիսկորեական «Նոդոն սինմուն» կուսակցական թերթի բնորոշմամբ, ջերմամիջուկային սինթեզը «որակապես նոր իրադարձություն է, որը վկայում է ԿԺԴՀ առաջադիմական տեխնոլոգիաների զարգացման մասին»:**

**Թերթը գրում է, որ Հյուսիսային Կորեան ջերմամիջուկային ռեակցիաների ուսումնասիրության ոլորտում շարժվել է սեփական ուղիով` «ճեղքում կատարելով նոր էներգիայի զարգացման մեջ»:**

**Փենյանը մի քանի տասնամյակ միջուկային ծրագիր էր մշակում Յոնբենի ռեակտորի բանեցված վառելիքից արտադրվող պլուտոնիումի հիման վրա, հիշեցնում է Ֆրանսպրես գործակալությունը: 2009-ի սեպտեմբերին ԿԺԴՀ իշխանությունները հայտարարեցին, որ հյուսիսկորեացի գիտնականները յուրացրել են ուրանի հարստացման վերջին փուլը:**

**2010-ի ապրիլին ԿԺԴՀ-ն հայտարարեց միջուկային փորձարկումների երրորդ շարքի նախապատրաստման մասին: Ավելի վաղ փորձարկումներ էին կատարվել 2006-ի հոկտեմբերին եւ 2009-ի մայիսին:**

# Նվիրում կրթությանն ու գիտությանը

Վերջերս կյանքից հեռացավ Սուսաննա (Շուշանիկ) Ամասունին` (1924-2010)` երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, Հայաստանի վաստակավոր ուսուցիչ, Երեւանի պետական կոնսերվատորիայի առաջատար դասախոսներից մեկը:

Նրա կյանքը, որն առաջին հայացքից ակնբախ չէր հանրության համար, մեծ օգուտ տվեց հասարակությանը. 60 տարի (նախ Պարարվեստի ուսումնարանում, ապա Պ. Չայկովսկու անվան մասնագիտացված երաժշտական դպրոցում, իսկ 1965-ից Երեւանի կոնսերվատորիայում նա վարում էր երաժշտատեսական առարկաներ, Լենինականում եւ Կիրովականում կարդում դասախոսություններ երաժշտական կրթության մեթոդիկայի վերաբերյալ:

Վաղ շրջանի մանկավարժական գործունեության արդյունքները արտացոլված են «Երաժշտական գրականության դասավանդումը ՄԵԴ 4-7-րդ դասարաններում» (Երեւան, 1965) մեթոդական ձեռնարկում, «Երաժշտությունը` ե՛ւ պահանջ, ե՛ւ անհրաժեշտություն» («Սովետական արվեստ», 1964, հմ. 6), «Երաժշտությունը հասկանալու եւ գնահատելու ունակությունների զարգացումը» («Սովետական մանկավարժ», 1970, հմ. 12) հոդվածներում, ինչպես նաեւ «Երաժշտական գրականություն 6-րդ դասարանի համար (Եր., 1972), «Երաժշտական գրականություն 7-րդ դասարանի համար» (Եր., 1981) դասագրքերում: Այդ դասագրքերը մինչեւ օրս դաստիարակում են պատանի երաժիշտների նոր սերունդներ: Նկատի առնելով դրանց նշանակությունը, հանրապետության մշակույթի նախարարությունը 2008-ին վերահրատարակեց դրանք:

Ս. Բ. Ամասունու մանկավարժության մեջ հիմնական տեղ ուներ աշխատանքը Երեւանի կոնսերվատորիայում: 1990-ից լինելով երաժշտության տեսության ամբիոնի դոցենտ, 1997-ից` պրոֆեսոր, Ամասունին վարում էր երաժշտական ստեղծագործությունների վերլուծման դասընթացներ, երաժշտատեսական առարկաների դասավանդման մեթոդիկա եւ երաժշտագետների, այդ թվում մագիստրանտների եւ ասպիրանտների մասնագիտացում:

Ամասունու մանկավարժության սկզբունքների մեջ պետք է եղել նախ եւ առաջ` երաժշտատեսական օրինաչափությունները վերլուծելիս պատմական գործոն կիրառելը, երկրորդ` տեսության եւ պրակտիկայի միջեւ կապ գտնելը: Պրոֆեսոր Ամասունին զարգացնում էր անհատական տրամաբանական մտածողության ունակությունը, ինչն առհասարակ նրա սերնդի մանկավարժների կրթության բնորոշ գիծն է: Նա պահանջում էր տեսական գիտելիքների հավաստիության, ինչպես նաեւ եզրաբանական ճշգրտության պահպանում, որոնք ուսանողների մեջ ձեւավորում են ակադեմիական գիտության հմտություններ: Ես ինքս անցել եմ երաժշտատեսական առարկաների դասավանդման մեթոդիկայի նրա դասընթացը, հիշում եմ մանկավարժի հետաքրքրությունն իմ կուրսային աշխատանքի թեմայի` Վերածննդից Բարոկկո անցման ժամանակաշրջանի ներդաշնակության հանդեպ: Դասընթացի սահմաններից դուրս եկող թեման վկայում էր Ս. Բ. Ամասունու կրթական դաստիարակության լայնության մասին, մանկավարժ, որը խրախուսում էր ուսանողի ամեն մի լուրջ ձեռնարկում:



Անտարակույս, այդ հատկությունը պայմանավորված էր նաեւ նրա անձնական մասնագիտական դաստիարակությամբ: Դիմենք կենսագրության փաստերին: Երեւանում ծնված Ամասունին 1928-1945 թթ. ընտանիքի հետ ապրել է իր տոհմական տանը (Գյումրի): Այստեղ դաշնամուր նվագել է սովորել դպրոցում, ապա (1940-1944 թթ.)` Ք. Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում եւ միաժամանակ ուսանել է երկամյա Ուսուցչական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում:

1945-ին դաշնամուրի մանկավարժ Օ. Ա. Գոլուբեւայի` Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտի պահանջով, Ամասունին կրթությունը շարունակում է Մոսկվայում: 1945-1950 թթ. նա Գնեսինների անվան երաժշտա-մանկավարժական ինստիտուտի պատմատեսական ֆակուլտետի ուսանողուհին էր, որտեղ նրա դասախոսներն էին ականավոր գիտնականներ Վ. Կոնենը, Տ. Լիվանովան, Վ. Ֆերմանը, Լ. Մազելը: Պրոֆեսոր Մազելի դպրոցի կարեւորությունը Ամասունին պահպանեց ամբողջ կյանքում: Մեղեդու մասին Մազելի տեսությունը, երաժշտական ձեւի վերլուծության մեթոդաբանությունը, երաժշտական արտահայտչամիջոցների ու ոճերի զարգացման տեսական հայեցակարգերի մշակումը, վերջապես պատմության եւ արդիականության դիալեկտիկան` սրանք են այն հիմնական կանխադրույթները, որոնցով Ս. Ամասունին ղեկավարվում էր մանկավարժական եւ գիտական պրակտիկայում:

Որպես մանկավարժ, Ամասունին Երեւանի կոնսերվատորիայում մշտապես տարածում էր Լ. Ա. Մազելի տեսական գաղափարները` դրանք հաջողությամբ իրականացնելով իր մասնագիտական գործունեության մեջ: Որպես գիտնական, Ամասունին հայրենական ժառանգության անձնվեր քարոզիչ էր: Նրա հետազոտական շահերը կապված են Կոմիտասի եւ մի շարք հայ կոմպոզիտորների (այդ թվում` Ա. Տեր-Ղեւոնդյանի, Հ. Ստեփանյանի, Բ. Սակկիլարիի, Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյանի, Գ. Չթչյանի) ստեղծագործության մեղեդային եւ ոճային օրինաչափությունների ուսումնասիրության հետ: Գլխավոր գիտական թեման` Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունը, Ամասունու բազմաթիվ աշխատություններում ստացել է ամբողջական եւ համակարգված մշակում, որը հիմնված է ազգային ժառանգորդության, ժամանակակից միջոցների մեկնաբանության եւ կոմպոզիտորի երաժշտական լեզվի զարգացման պարզաբանման վրա:

1985-ին Երեւանում լույս տեսավ Բաբաջանյանին նվիրված անչափ բովանդակալի մենագրություն. «Առնո Բաբաջանյան: Գործիքային ստեղծագործություն»: Գրքի գիտական բարձր մակարդակը կանխորոշեց Ս. Ամասունու առաջավոր տեղը հայ երաժշտագիտության մեջ: Ինչպես այդ գրքի հիման վրա թեկնածուական դիսերտացիայի պաշտպանությունը, այնպես էլ Բաբաջանյանի երաժշտությանն առնչվող Ամասունու հետագա աշխատությունները պերճախոս կերպով վկայում են հեղինակի առաջադիմական հետազոտական արժանիքների մասին: Մինչեւ օրս ոչ որ անուշադրության չի մատնում այդ գիրքը: Իսկ ինքը` Ամասունին շարունակում էր հանդես գալ սիրելի կոմպոզիտորի պատվին կազմակերպված հոբելյանական կոնֆերանսներում: Այսպես, հիանալի է Բաբաջանյանի երգերին նվիրված նրա հոդվածը (տե՛ս «Նվիրվում է Առնո Բաբաջանյանին» կոնֆերանսների նյութերի ժողովածու, Եր., 2008):

Բաբաջանյանի երաժշտությունը վերլուծելիս մշակված մեթոդաբանությունը մեծապես կանխորոշել է Ամասունու հաջորդ գրքի բովանդակությունը («Գեղունի Չթչյան: Կյանքը եւ ստեղծագործությունը», Եր., 2003): Նաեւ ռուսերեն լույս տեսած այդ գիրքը լայն արձագանք է գտել Հայաստանից դուրս: Շարադրանքին բնորոշ ակադեմիական տոնն այստեղ հարստացված է Չթչյանի գեղարվեստական անհատականության մանրամասնություններով, ինչը գիրքը հետաքրքիր է դարձնում ոչ միայն մասնագետ երաժիշտների համար:

Պրոֆեսոր Սուսաննա Ամասունին ժառանգություն է թողել անդուլ գիտական աշխատանքի պտուղներ, որոնք վկայում են ճշմարիտ իմացության իդեալներին անշահախնդիր ծառայելու մասին:

**ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Արվեստագիտության դոկտոր**

# Մայիսի 15-ին կմեկնարկի «Թանգարանների Եվրոպական գիշեր-2010»-ը

**Ֆրանսիայի մշակույթի նախարարությունը 2005-ից հանդես եկավ «Թանգարանների գիշեր» նախաձեռնությամբ, որն ամեն տարի ընթանում է Եվրոպայի խորհրդի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Այդ նախաձեռնությունը նպաստում է հյուսել նոր կապեր` եվրոպական մայրցամաքի թանգարանների միջեւ եւ հրավիրում է ողջ հասարակությանը` բացահայտելու ամենամոտ մշակութային միջնորդների` թանգարանների անսպառ հարստությունները...**

**ԻԿՕՄՕՍ-ն առաջարկել է 2010-ին գործողություններ իրականացնել «Թանգարանները հանուն սոցիալական ներդաշնակության» խորագրի շրջանակում: Այդ համատեքստում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը` միանալով Թանգարանային գիշեր եվրոպական ձեռնարկին, մայիսի 15-ին, շաբաթ օրը կհյուրընկալի Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների խմբերին` հույներ, ասորիներ, հրեաներ, լեհեր, ուկրաինացիներ, բելառուսներ, վրացիներ, գերմանացիներ, եզդիներ ու քրդեր, որոնք կծանոթանան թանգարանի մշտական ցուցադրությանը եւ «Ուրարտուից Երեւանի գարեջուր» ժամանակավոր ցուցահանդեսին, իսկ այնուհետեւ թանգարանի հարկի տակ միասին կանցկացնեն երեկոն` միմյանց մշակույթը ավելի լավ ճանաչելու համար:**

**Հենց այդպես էլ «Ճանաչենք զմիմյանս» խորագրով կսկսվի տարբեր ազգերի համույթների ելույթները ժամը 18-ից մինչեւ կեսգիշեր: Միջոցառումների ընդարձակ ծրագրին աջակցել են «ԻԿՕՄՕՍ/Հայաստան ՀԿ-ն», «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, մի շարք կազմակերպություններ, տեղեկացրեց թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը:**

**Այդ օրը հանրապետության բոլոր թանգարաններում զուգահեռ կընթանան համապատասխան ձեռնարկներ, որոնք կշարունակվեն մինչեւ կեսգիշեր:**

**Ս. Ս.**

63-ՐԴ ԱՆԳԱՄ

# Կաննի կինոփառատոնը բացվեց

## Ա. Էգոյանը` երկու ժյուրիների ղեկավար

**Ֆրանսիայի միջերկրածովյան Կանն քաղաքում մայիսի 12-ին հերթական` 63-րդ անգամ բացվել է ավանդական ամենամյա կինոփառատոնը: Թեեւ պաշտոնական բացումը տեղի էր ունենալու երեկոյան` Ռիդլի Սքոթի «Ռոբին Հուդ» ֆիլմի պրեմիերայով, բայց արդեն ցերեկային ժամերին սկսվել էին առաջին ցուցադրությունները, այդ թվում` հիշյալ ֆիլմինը:**

**Սքոթի ֆիլմը փառատոնին մասնակցում է մրցույթից դուրս: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ բեմադրիչը վիրահատվել եւ չի ժամանել Կանն, բայց ցուցադրությանը ներկա գտնվելու համար ժամանել են գլխավոր դերակատարներ Ռասել Քրոուն եւ Քեյթ Բլանշեթը:**

**Փառատոնի մրցութային ծրագրում հայտավորված 19 ֆիլմերի մեջ են Տակեշի Կիտանոյի, Ալեքսանդրո Գոնսալես Ինյարիտուի, Ապիչատպոնգ Վիրասեթակուլի, Մաթյո Ամալրիկի աշխատանքները, ինչպես նաեւ Նիկիտա Միխալկովի «Արեւից հոգնածները-2» ֆիլմը, որը կցուցադրվի փառատոնի նախավերջին օրը` մայիսի 22-ին:**

**Հիմնական ծրագրից բացի, կանցկացվի կարճամետրաժ ֆիլմերի փառատոն, ինչպես նաեւ կհանձնվեն «Հատուկ հայացք» մրցանակ, «Սինեֆոնդասիոն» ծրագրում ներկայացված լավագույն ուսանողական ֆիլմի մրցանակ եւ «Ոսկե կինոխցիկ»` լավագույն նորամուտի համար:**

**Այս տարի մրցութային ծրագրի ժյուրին գլխավորում է բեմադրիչ Թիմ Բարթոնը: Բեմադրիչ Ատոմ Էգոյանը «Սինեֆոնդասիոն» եւ «Կարճամետրաժ ֆիլմեր» ծրագրերի ժյուրիների ղեկավարն է: «Ոսկե կինոխցիկի» ժյուրին գլխավորում է Գաել Գարսիա Բեռնալը, իսկ «Հատուկ հայացքինը»` ֆրանսիացի բեմադրիչ Քլեր Դընին:**

# Հայրապետ Առաքելյանը Եվրատեսիլի եզրափակիչ փուլում

## Սպասեք նրան մայիսի 14-ին, ժամը 21.20-ին Վիեննայի Ռաթհաուսփլացում

**Մեր ընթերցողներին ապրիլին արդեն իրազեկել ենք, որ մայիսին Վիեննայում Եվրատեսիլի երիտասարդ երաժիշտներ (Eurovision Young Musicians-EYM) մրցույթին Գերմանիան ներկայացնում է 1991-ին Երեւանում ծնված սաքսոֆոնահար Հայրապետ Առաքելյանը: Նա, ի թիվս 7 մասնակիցների, անցել է մայիսի 8-ին եւ 9-ին անցկացված մրցույթի կիսաեզրափակիչ փուլը: Մրցակցությունը շատ մեծ է: Եզրափակիչ փուլ են անցել Խորվաթիայի ներկայացուցիչ Ֆիլիպ Մերչեփը (մարիմբահարվածային գործիքների ընտանիքից), Նորվեգիայից Գուրո Քլեվենհագենը (ջութակ), Լեհաստանից Բարթոշ Գլովացկին (ակորդեոն), Բելառուսից Իվան Կարիցնան (թավջութակ), Սլովենիայից Եվա-Նինա Կոզմուսը (ֆլեյտա), Ռուսաստանից Դանիիլ Տրիֆոնովը (դաշնամուր): Արդեն հաղորդել էինք, որ միջազգային մասնագիտական ժյուրին է որոշում եզրափակիչ փուլ անցած 7 թեկնածուներին, ովքեր մայիսի 14-ին, ժամը 21.20-ին Վիեննայի Ռաթհաուսփլացում Վիեննայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ (դիրիժոր Կոռնելիուս Մայսթեր) կենդանի կատարմամբ հանդես են գալու 45 000 հանդիսատեսի առջեւ: Շոուն ուղիղ հեռարձակելու են մասնակից երկրների հեռուստաընկերությունները: Հաղթողին որոշելու է ժյուրին, բայց հաշվի են առնելու նաեւ sms քվեարկությունները, ինչպես նաեւ հրապարակում հավաքված հանդիսատեսի անմիջական տպավորությունները: Բազմիցս առիթ ենք ունեցել երկու կողմից էլ լսել, թե ավստրիացիներն այնքան էլ ջերմ չեն գերմանացիների հանդեպ, իսկ Եվրատեսիլի մրցույթներին հետեւելով կարելի է կռահել, թե անկախ կատարման որակից Հայրապետի` Գերմանիան ներկայացնելու փաստը կարող է նաեւ քիչ ծափերի արժանանալ: Ենթադրում ենք, որ Վիեննայում ապրող մեր հայրենակիցները Ռաթհաուսփլացում իրենց ջերմ ներկայությամբ կոգեւորեն մեր հայրենակցին` նրա տաղանդին գումարելով անուր թիկունք:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Սիբիրյան ռեպրեսիաները դասախոսության նյութ

**Խմբագրությանը հասցեագրված մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ հինգշաբթի օրը մայիսի 13-ին Շերման Օուքսում (Կալիֆոռնիա) գտնվող Մերդինյան հանդիսասրահում տեղի է ունենալու դասախոսություն «Հայ ներգաղթողների դեմ ծավալված ռեպրեսիաները Ստալինյան ժամանակաշրջանում» թեմայով: Բանախոսելու է իրանահայ Արմինե Քունդակչյանը, ով քիմիկոսի կոչում է ստացել Մ. Նահանգներում, եւ երկար տարիներ քիմիա դասավանդել բարձր դասարանցիներին: Նա նաեւ ակտիվ մասնակցություն է ունեցել ամերիկահայ կուսակցության եւ մշակութային կազմակերպությունների գործունեության մեջ: Անդամ է մի շարք գիտական-հասարակական ընկերությունների: Հայաստանի անկախությունից ի վեր տարեկան մի քանի ամիս անցկացնում է Հայաստանում եւ մեծապես հետաքրքրված է Հայաստանին եւ հայերին վերաբերող խնդիրներով:**

**Դասախոսության ընթացքում նա անդրադառնալու է 1920-1953 տարիներին դեպի Սիբիր անմեղ մարդկանց աքսորելու մեխանիզմներին, ինչպես նաեւ ներկայացնելու է հարցազրույցներ 3 վերապրողների հետ:**

**Երեկոն կազմակերպել է ԱՐՓԱ ինստիտուտը, որի մասին հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ այցելելով «info@arpainstitute.org»:**

**Հ. Ծ.**

# Տիգրան Առաքելյանի համերգները Սիեթլում

**Մայիսի 13-ին եւ 14-ին Սիեթլի (Վաշինգտոն) «Ռոյ Սթրիթ կոֆի ընդ թի» եւ «Ռեյզբեք Փըրֆորմընս Հոլ» դահլիճներում համապատասխանաբար տեղի են ունենալու Երեւանում ծնված, հետագայում Մ. Նահանգներ տեղափոխված եւ Սիեթլի Քաղենս կամերային նվագախմբի հիմնադիր դիրիժորն ու երաժշտական ղեկավարը դարձած եռանդուն ֆլեյտիստ Տիգրան Առաքելյանի համերգները, տեղեկացնում է այդ առթիվ ստացված մամլո հաղորդագրությունը:**

**Տիգրանը ներկայիս սովորում է Արվեստների Քոռնիշ քոլեջում եւ շուտով կստանա իր բակալավրի աստիճանը: Մասնակցել է Ալյասկայում կայացած «Ֆերբանկս արվեստների ամառային փառատոնին», Հոլիվուդում տեղի ունեցած Սըր Ջեյմս Գելուեյի անվան ֆլեյտայի սեմինար-համերգին եւ Իդիլուայլդի երաժշտական տոնահանդեսին:**

**Վերոնշյալ համերգներին նա նվագելու է Մոցարտի, Ռավելի, Սիբելիուսի եւ Ջիանոլայի ստեղծագործություններից:**

**Հ. Ծ.**

AZG NEW PDF.qxd 12/05/2010 22:04 Page 1





# Երիտասարդական հավաքականը սկսում է նախապատրաստությունը

## Սերիցլեւը հավաքի է հրավիրել 22 ֆուտբոլիստի



Մայիսի 20-ին ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը 2011-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում կհյուրընկալվի Էստոնիայի հավաքականին: Այդ հանդիպմանը նախապատրաստվելու նպատակով երիտասարդական հավաքականը Երեւանում մայիսի 14-19 ուսումնամարզական հավաք կանցկացնի: Հավաքականի գլխավոր մարզիչ Ֆլեմինգ Սերիցլեւը հավաքի է հրավիրել 22 ֆուտբոլիստի:

Ուրախալի է, որ այս անգամ հաջողվել է հավաքական հրավիրել մեր ընտրանու բոլոր խաղացողներին: Խոսքն առաջին հերթին Հենրիխ Մխիթարյանի մասին է, որն 8 գնդակով Հայաստանի երիտասարդական հավաքականի լավագույն ռմբարկուն է: Ինչպես հայտնի է, Դոնեցկի «Մետալուրգի» ղեկավարության խնդրանքով նա չէր հրավիրվել հավաքականի նախորդ հավաքին ու չմասնակցեց մարտի 3-ին Դուբլինում Իռլանդիայի հավաքականի հետ կայացած ընտրական մրցախաղին: Ճիշտ է, առանց Մխիթարյանի էլ մեր ֆուտբոլիստները հաղթեցին իռլանդացիներին (2-1): Սակայն Էստոնիան ավելի լուրջ մրցակից է, ուստի Մխիթարյանի կարիքը խիստ զգացվում է:

Բացի Մխիթարյանից, մեր թիմի հարձակման գծում կխաղան լավ մարզավիճակում գտնվող Գեւորգ Ղազարյանը, ինչպես նաեւ լեգեոնականներ Հրաչ Յագանն ու Գեւորգ Բադալյանը: Լեգեոնականներից հավաքի են հրավիրվել նաեւ «Համբուրգում» խաղացող Լեւոն Հայրապետյանն ու «Մետալուրգում» ընդգրկված Արտակ Դաշյանը: Ճիշտ է, վերջինս խաղային պրակտիկա քիչ ունի, քանի որ գրեթե չի խաղում «Մետալուրգի» հիմնական կազմում:

Սերիցլեւն այս հավաքին թիմի կազմում ընդգրկել է 4 նորեկների՝ Հովհաննես Համբարձումյանին, Կամո Հովհաննիսյանին, Հայկ Իշխանյանին եւ Ջավեն Բադոյանին: Բացի նրանցից, մարզումներին կմասնակցեն նաեւ դարպասապահներ Էդվարդ Հովհաննիսյանն ու Գեւորգ Պրազյանը, պաշտպաններ Գագիկ Դաղբաշյանը, Արտաշես Առաքելյանը, Արթուր Յուզբաշյանը, Արտակ Եդիգարյանը, Արտակ Անդրիկյանը, կիսապաշտպաններ Դավիթ Մանոյանը, Էդգար Մալաքյանը, Սարգիս Կարապետյանը, Կառլեն Մկրտչյանը, Արամ Բարեղամյանը:

Հայաստանի երիտասարդական հավաքականն ընտրական մրցաշարի 2-րդ խմբում 7 խաղից հետո նույնքան միավորով 5-րդ տեղում է: Մեր ֆուտբոլիստները տոնել են 2 հաղթանակ (Իռլանդիա՝ 4-1, 2-1), մեկ խաղ (Էստոնիա՝ 1-1) ավարտել են ոչ-ոքի, 4-ում պարտվել են (Շվեյցարիա՝ 1-2, 1-3, Թուրքիա՝ 2-5, 0-1): Մեր հավաքականը խփել է 11 գնդակ, բաց թողել՝ 14-ը: Ընդ որում, հայ ֆուտբոլիստները շատ անհաջող մեկնարկեցին՝ կրելով 4 անընդմեջ պարտություն: Իսկ ահա վերջին 3 խաղերը Սերիցլեւի սաները վերելքով անցկացրին ու վաստակեցին 7 միավոր:

Էստոնիայի հավաքականը 7 խաղում վաստակած 9 միավորով 3-րդ տեղում է: Երեւանյան խաղում էստոնացիները միայն վերջին րոպեին խուսափեցին պարտությունից (1-1): Ընտրական մրցաշարի վերջին 2 հանդիպումները հայ ֆուտբոլիստները կանցկացնեն վրացիների հետ: Առաջին խաղը կկայանա օգոստոսի 11-ին Երեւանում, պատասխան հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերի 7-ին:

Ի դեպ տեղեկացնենք, որ հավաքի պատճառով առաջնության 8-րդ տուրի 2 խաղ կանցկացվի նախատեսվածից մեկ օր շուտ: «Փյունիկն» ու «Շիրակը» «Հանրապետականում» կմրցեն մայիսի 14-ին, իսկ հաջորդ օրը նույն մարզադաշտում խաղադաշտ դուրս կգան «Բանանցն» ու «Միկան»: Այդ հանդիպումները կսկսվեն ժամը 20-ին:

# Թիավարները վիճարկեցին առաջնության պարգեւները

74 թիավարներ վիճարկեցին Երեւանյան լճում անցկացված բայդարկաներով ու կանոեներով թիավարության Հայաստանի պատանեկան առաջնության պարգեւները: Մեկ տեղանոց բայդարկաներով Բ1 դասի մրցումներում գերազանց հանդես եկավ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության թիավարության մարզադպրոցի (տնօրեն՝ ԽՍՀՄ սպորտի վարպետ Հարություն Գասպարյան) սան Վլադիմիր Ալավերդյանը: Նա հաղթող ճանաչվեց 200, 500 եւ 1000 մ մրցատարածություններում:

Երկտեղանոց բայդարկաներով Բ2 դասի մրցումներում եւս Վլադիմիր Ալավերդյանը լավագույնն էր: Ընկերակցելով Դավիթ Հարությունյանին, Ալավերդյանը հաղթող ճանաչվեց բոլոր 3 մրցատարածություններում էլ: Այս երկյակը Մանվել Պալասյանի եւ Արման Սայաթխանյանի հետ հաղթող ճանաչվեցին չորս տեղանոց բայդարկաներով 500 մ մրցատարածության մրցումներում: Նշենք, որ Բ2 դասում չեմպիոններին լուրջ մրցակցություն ցույց տվեցին Հայկ Գասպարյանն ու Նարեկ Խաչատրյանը, որոնք ի վերջո գրավեցին 2-րդ տեղը:



Մեկ տեղանոց կանոեներով Կ1 դասի մրցումներում բացարձակ չեմպիոն դարձավ Էդգար Բաբայանը, որը վերը նշված մարզադպրոցի Հրազդանի մասնաճյուղի սան է: Հրազդանցի թիավարներ Գարիկ Բաբայանն ու Դավիթ Գրիգորյանը լավագույնն էին երկտեղանոց կանոեներով մրցումներում: Աղջիկներից Կ1 դասում չեմպիոնուհի հռչակվեց Անահիտ Հովհաննիսյանը, որն իր քրոջ՝ Արեւիկի հետ ուժեղագույնն էր նաեւ Կ2 դասում:

# Հայ թենիսիստները մեկնարկեցին պարտությամբ

**Թենիսի Հայաստանի տղամարդկանց հավաքականն անհաջող մեկնարկեց Դեւիսի գավաթի եվրոաֆրիկյան տարածաշրջանի 3-րդ խմբում: Առաջին խաղում մեր թենիսիստները 0-3 հաշվով զիջեցին Չեռնոգորիայի ընտրանուն: Մենախաղում Հարություն Սոֆյանը 1-6, 2-6 հաշվով պարտվեց Դանիել Դանիլովիչին, իսկ Խաչատուր Խաչատրյանը զիջեց Գորան Տոշիչին (2-6, 1-6): Զուգախաղում էլ Խաչատրյան-Սոֆյան զույգը պարտվեց Սելեբիչ-Կոնտիչ երկյակին (1-6, 2-6):**

**Ենթախմբի 2-րդ խաղում մեր թենիսիստները կմրցեն Սան Մարինոյի հավաքականի հետ: Այնուհետեւ ՀՀ հավաքականն ուժերը կչափի Մոլդովայի, Ալբանիայի, Հունաստանի հավաքականների հետ:**

# Հայաստանը 43-րդն է

ՈւԵՖԱ-ն հրապարակել է «Ազնիվ խաղի» մրցանակի վերջնական դասակարգման ցուցակը: ՈւԵՖԱ-ի անդամ 53 երկրների մեջ Հայաստանը 7,555 գործակցով 43-րդն է: Հաշվի են առնվել ՈւԵՖԱ-ի հովանու ներքո ակումբների եւ հավաքականների անցկացրած հանդիպումները 2009-ի մայիսի 1-ից մինչեւ 2010-ի ապրիլի 30-ը:

Երկրների վարկանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել այդ հանդիպումներում ֆուտբոլիստների եւ հանդիսականների վարքագիծը, նրանց վերաբերմունքը մրցակցի եւ մրցավարների նկատմամբ, ինչպես նաեւ ստացած դեղին եւ կարմիր քարտերի քանակը:

«Ազնիվ խաղի» մրցանակի հաղթող է ճանաչվել Շվեդիան, որի վարկանիշը 8,275 է: Լավագույն եռյակում են նաեւ Դանիան (8,189) եւ Ֆինլանդիան (8,147): Այս երկրները Եվրոպայի լիգայի գալիք խաղարկությունում լրացուցիչ մեկական տեղ կստանան:



# Շախմատային թագը կրկին Անանդինն է



**Շախմատի աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը պահպանեց ուժեղագույնի իր տիտղոսը: Սոֆիայում անցկացված մրցամարտի 12-րդ պարտիայում, սեւերով հաղթելով Վեսելին Թոփալովին, Անանդը հաղթեց 6,5-5,5 հաշվով:**

**12-րդ պարտիան վերջինն էր Թոփալով-Անանդ մրցամարտում: Եթե այն ավարտվեր ոչ-ոքի, ապա կնշանակվեր լրացուցիչ մրցախաղ արագ շախմատի 4 պարտիայից: Սակայն դրա անհրաժեշտությունը չզգացվեց: 12-րդ պարտիայում սպիտակ խաղաքարերով խաղում էր Թոփալովը: Դա նրան որոշակի առավելություն էր տալիս: Ընդհանրապես այս մրցաշարում երկու շախմատիստներն էլ իրենց հաղթանակները տոնել են միայն սպիտակներով:**

**Անանդն ընտրել էր թագուհու գամբիտի տարբերակը: 32-րդ քայլում Թոփալովը վճռորոշ սխալ թույլ տվեց, իսկ մի քանի քայլ հետո բուլղարացի գրոսմայստերը գլուխն ափերի մեջ առավ՝ հասկանալով, որ ամեն ինչ վերջացած է: Ճիշտ է, նա փորձում էր պաշտպանվել, սակայն ապարդյուն: 56-րդ քայլին Թոփալովն ընդունեց պարտությունը:**

**Այսպիսով, հաղթելով 6,5-5,5 հաշվով, Անանդը պահպանեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը եւ արժանացավ 1,2 մլն եվրոյի: Թոփալովին բաժին հասավ 800 հազար եվրոն:**

**«Բուլղարիայում ես իմ ամենադժվարին մրցախաղն անցկացրի: Նախորդ հանդիպումներն ինչ-որ չափով կանխատեսելի էին: Սակայն այսօրվա մրցախաղն ամենաանկանխատեսելին էր: Մրցամարտի ելքն անորոշ էր մինչեւ վերջին րոպեները, բացի այդ 12-րդ պարտիայից առաջ արդեն զգալիորեն հոգնած էի: Մրցախաղը հիանալի էր կազմակերպված եւ շատ բարձր մակարդակով անցավ: Թոփալովն այսօր աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկն է: Նա խաղում էր սեփական հարկի տակ, սակայն շախմատում դա այնքան էլ էական չէ», նշել է Անանդը մամուլի ասուլիսում:**

**«Կարծում եմ Թոփալովը մի փոքր նյարդայնանում էր: Նա վատ չէր խաղում, սակայն մի քանի սխալներ թույլ տվեց, որոնցից Անանդը հանգիստ օգտվեց: Դա պատմական մրցամարտ էր մեր երկրի համար: Բուլղարիան միլիոնավոր մարդկանց ուշադրության կենտրոնում էր: Ուրախ ենք, որ հաջողվեց նման մրցախաղ անցկացնել: Այժմ Վեսելինը պետք է հանգստանա: Հարկավոր է կրկին հաղթել հավակնորդների մրցաշարում, որպեսզի նորից Թոփալովը մրցի Անանդի հետ», նշել է Թոփալովի մենեջեր Սիլվիո Դանաիլովը:**

# Հակոբյանը զիջեց մրցակցին

**Աստրախանում ընթացող շախմատի Գրան պրիի մրցաշարի 2-րդ տուրում Վլադիմիր Հակոբյանը սեւերով պարտվեց Պավել Էլյանովին: 2 տուրից հետո Հակոբյանը Սվիդլերի, Մամեդյարովի, Ալեքսեեւի եւ Իվանչուկի հետ եզրափակում է աղյուսակը: Ինչպես տեսնում ենք, բավական բարձր վարկանիշ ունեցող այս շախմատիստներն անհաջող են մեկնարկել:**

**Աղյուսակը 1,5-ական միավորով գլխավորում են Հաշիմովը, Պոնոմարյովը, Լեկոն, Էլյանովն ու Գելֆանդը: Պոնոմարյովը հաղթեց Սվիդլերին, Լեկոն առավելության հասավ Մամեդյարովի նկատմամբ: Ռաջաբով-Ինարկիեւ, Իվանչուկ-Վան Յուե, Յակովենկո-Հաշիմով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

**3-րդ տուրում Հակոբյանը սպիտակներով կխաղա Պետեր Լեկոյի հետ:**

# Սամվել Տեր-Սահակյանն անհաջող է մեկնարկել

**Ռուսաստանի Կիրիշի քաղաքում անցկացվող «Աշխարհի պատանի աստղեր» շախմատի ավանդական 8-րդ մրցաշարում Հայաստանը ներկայացնում է 17-ամյա գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը: Նա իր վարկանիշով (2523) մրցաշարի 12 մասնակիցներից զիջում է միայն ուկրաինացի Յարոսլավ Ժերեբուխին (2567) եւ ռուսաստանցի Ալեքսանդր Շիմանովին (2544): Մրցաշարը ՖԻԴԵ-ի 8-րդ կարգի է, մասնակիցների միջին վարկանիշը 2432 է:**

**Սամվել Տեր-Սահակյանն առայժմ անհաջող է հանդես գալիս: Մեկնարկային տուրում հաղթելով ռուսաստանցի Ալինա Կաշլինսկայային, Սամվելը պարտություններ կրեց Վիտալի Բեռնադսկուց եւ Ուլվի Բաջարանիից: Նա մեկ միավորով Բաջարանիի եւ Կաշլինսկայայի հետ բաժանում է 8-10-րդ տեղերը: Առաջատարը ռուսաստանցի Վլադիմիր Բելոուսն է, որը 3 հաղթանակ է տոնել: 2,5 միավոր ունի Յարոսլավ Ժերեբուխը:**

# 6 թիմերի մասնակցությամբ

**Մայիսի 14-ին կմեկնարկի բասկետբոլի Հայաստանի հերթական առաջնությունը: Տղամարդկանց եւ կանանց մրցաշարերին կմասնակցեն 6-ական թիմեր: 2 շրջանով անցկացվելիք մրցաշարի արդյունքներով 4 լավագույն թիմերը կշարունակեն պայքարը մրցանակային տեղերի համար:**

**Տղամարդկանց մրցաշարին կմասնակցեն «Հասիսը», «Գյումրին», «Արցախը», «Պոլիտեխնիկը», «Մալաթիան» ու «Էջմիածինը»: Կանանց մրցապայքարում մրցավեճի կբռնվեն «Հասիսը», «Գրանդ Քենդին», ԳՍՀ-ն, «Գյումրին», «Արցախն» ու «Էրեբունին»:**

# Աղասի Ինանցը տսկում է դրությունը

**Սարաեւոյի մրցաշարի վերջին տուրերում Աղասի Ինանցը հաջող ելույթների շնորհիվ զգալիորեն բարելավեց մրցաշարային իրավիճակը: 7-րդ տուրում նա 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ռիչարդ Ռապպորտի նկատմամբ: 7 տուրից հետո Ինանցը 4,5 միավորով 2-րդ տասնյակում է:**

**Իսկ ահա Դավիթ Պետրոսյանն աստիճանաբար զիջում է դիրքերը: Նա պարտվեց Նիլս Գրանդելիուսին: Պետրոսյանը վաստակել է 4 միավոր:**

**Առաջատարն Արտյոմ Տիմոֆեեւն է, որը հաղթելով Յան Գուստաֆսոնին, վաստակել է 6,5 միավոր: 11 շախմատիստներ առաջատարին զիջում են մեկ միավորով:**

# Մնաց մեկ տուր

**Մեկ տուր է մնացել իսպանական Սալոու քաղաքում անցկացվող շախմատի մրցաշարի ավարտին: 8-րդ տուրում Կարեն Մովսիսյանը հաղթեց Հայկի Վեստերինենին եւ 5 միավորով 20-րդ տեղում է ընթանում: 6,5-ական միավորով առաջատարներն են Սերգեյ Ֆեդորչուկն ու Օմար Ալմեյդան:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Բնապահպանության նախարարությունն ու քաղաքապետարանն իրար վրա են գցում «Ուսանողական այգու» խնդիրը

«Ոչ մի թիզ կանաչ տարածք քաղաքում», երեւի այս նշանաբանով են շարժվում մեր երկրում պաշտոնյաները՝ քաղաքում իրար հետեւից վերացնելով կանաչ գոտիները, փոխարենը կառուցելով ամենատարբեր օբյեկտներ ու այլանդակելով քաղաքի ճարտարապետական տեսքը:

Այս անգամ նրանք ընտրել են «Ուսանողական այգին», որի հարակից հատվածը կարելի է համարել փոքր ուսանողական քաղաք, ուր տեղակայված է 5 բուհ: Տարիներ շարունակ այգին ուսանողների համար եղել է անվճար հանգստի վայր: Արդեն մեկ ամիս այգում կառուցապատման աշխատանքներ են ընթանում, ինչի մասին **«Ազգը»** գրել է քանիցս: Թեպետ քաղաքապետարանից ասում են, որ ծառեր չեն հատվել, սակայն այգում կատարած լուսանկարները փաստում են, որ այնտեղ լուրջ եւ ծավալուն շինարարություն է ընթանում:



«Այգին հանրային սեփականություն է: Ստեղծվել է, որ ապահովի լռություն Ազգային գրադարանի ընթերցանության համար, որ ուսանողները կարողանան հանգիստը այգում անցկացնել: Բացի այդ, Երեւանի պես աղտոտված քաղաքում նման այգիների նշանակությունը կարեւոր է», **«Ազգի»** զրույցում ասաց «Մենք ենք մեր քաղաքի տերը» նախաձեռնության հեղինակ **Արթուր Ավթանդիլյանը**: Նա նկատում է, որ Վիկտոր Համբարձումյանի կիսանդրու տեղադրման եւ դրա հետ կապված ընդհանուր բարեկարգման աշխատանքների պատրվակով ու դրա քողի տակ իրականացվեցին ծառահատումներ:

«Ուսանողական այգին» հանրային սեփականություն է եւ չի կարող սեփականաշնորհվել: Եթե տարածքը վարձակալությամբ է տրված՝ տրամաբանական է, որ կառուցվող ժամանակավոր շինությունը վարձակալության ժամկետի ավարտից հետո պետք է հեշտ ապամոնտաժվի: Մինչդեռ կառուցվում է եռեքհարկանի կառույց, հարկերից երկուսը՝ ստորգետնյա: Դրան ավելի մեղմ բնորոշում, քան կապիտալ շինություն, հնարավոր չէ տալ: Հարց է ծագում՝ այդքան փող են ծախսում, որ պայմանագրի ժամկետի ավարտից հետո այն քանդե՞ն:

«Մենք ենք մեր քաղաքի տերը» նախաձեռնության մասնակիցները վերջերս հանդիպել են Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի հետ: «Հանդիպման ժամանակ քաղաքապետը խոստացավ, որ ապագայում նման խառնարաններ կանաչ գոտիներում չեն փորվի: Սակայն քաղաքապետարանի տարածած հաղորդագրության մեջ այդ խոստումը բացակայում էր: Ներկայացվել էր ոչինչ չասող տեղեկատվություն»:

Քաղաքապետի բանավոր խոստումը «Ուսանողական այգուն» չէր վերաբերում: Պրն Բեգլարյանի առաջարկությունից կարելի է ենթադրել, թե այգին քանդենք, նոր շինություն կառուցենք՝ միաժամանակ խոստանալով, որ նման բաներ այլեւս չեն կրկնվի:

«Ուսանողական այգու» կապակցությամբ քաղաքապետի պատասխանը գոհացուցիչ չէր, որովհետեւ կա կոնկրետ խնդիր, որը ակնկալում է կոնկրետ պատասխան: Յուրաքանչյուր պատասխան, որ դուրս է որոշակիությունից, չի կարող գոհացուցիչ լինել», ասաց Ավթանդիլյանը:

Նախաձեռնող խմբի անդամները հանդիպել են նաեւ բնապահպանության նախարարության ներկայացուցիչների հետ՝ արձանագրելով զավեշտալի փաստ:

«Քաղաքապետարանի ներկայացուցիչը հիմնավորում էր, որ պատասխանատուն բնապահպանության նախարարությունն է, հաջորդ օրը նախարարության ներկայացուցիչը նույն տեքստը կրկնելով՝ մեղադրում էր քաղաքապետարանին: Հանդիպումներին երկու կողմի ներկայացուցիչները չեն լինում, որ հարցը ուղղես ու հասկանաս թե իրականում ի՞նչ է կատարվում: Նրանք խոսում են օրենսդրության անկատարության մասին ու հավելում, որ նախարարության եւ քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների իրավունքներն ու պարտականությունները հստակորեն սահմանազատված չեն: Երբ կողմերին հարցնում ենք՝ ի՞նչ ենք անել, որ պարտականությունները հստակեցվեն՝ հանդիպում էինք լռության»:

«Մենք ենք մեր քաղաքի տերը» նախաձեռնության հեղինակներն արդեն 10 օր Երեւանի փողոցներում ստորագրահավաք են իրականացնում. հավաքվել է 12.000 ստորագրություն: Ստորագրահավաքը կշարունակվի մինչեւ ուրբաթ: Պահանջն է՝ դադարեցնել այգում իրականացվող շինարարությունը եւ վերականգնել այգու նախկին տեսքը: Նամակն ու ստորագրահավաքի արդյունքները բնապահպանները կուղարկեն ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին, վարչապետ Տիգրան Սարգսյանին եւ Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանին:

Զուգահեռ փորձում են պարզել, թե ո՞վ է իրականացնում շինարարություն, սակայն իրենց ավելի շատ հետաքրքրում են պաշտոնյաները, որոնք տրամադրել են թույլտվություն, կնիքն ու ստորագրությունը դրել փաստաթղթերի տակ: «Պաշտոնյաները կատարել են օրենքի խախտում: Նշանակում է՝ սեփականատերը, անկախ իր կշռից, դիրքից եւ ազդեցությունից դառնում է տուժող, որովհետեւ նրան տրամադրել են սխալ թույլտվություն»:

Ավթանդիլյանն ասաց, որ պաշտոնապես դիմել են քաղաքապետարան՝ ստանալու պաշտոնյաների անունները, սակայն քաղաքապետարանը նամակին դեռ չի պատասխանել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՂԻՆ ՍՏԻՊԵԼ ԵՆ

# Էռնեստ Վարդանյանը ընդունե՞լ է լրտեսություն անելու մեղադրանքը

**Երկուշաբթի՝ մայիսի 17-ին Մոլդովայի հանրային հեռուստատեսության քաղաքական ծրագրերից մեկը քննարկման թեմա է դարձնելու լրտեսության մեղադրանքով Մերձդնեստրի իշխանությունների ձերբակալած հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանին առնչվող իրավիճակն ու արձագանքները, հատկապես հաշվի առնելով երեկ, «Ազգի» տեղեկություններով, Մերձդնեստրի ազգային անվտանգության ծառայությունների տարածած տեսանյութը, որում Վարդանյանը «խոստովանում է» իր մեղավորությունը:**

**Էռնեստ Վարդանյանը իբր ինքնախոստովանական ցուցմունքներ է տալիս՝ ընդունելով իր համագործակցությունը Մոլդովայի հատուկ ծառայությունների հետ: Մերձդնեստրի հեռուստատեսությամբ հեռարձակված տեսանյութը տեղադրված է նաեւ Youtube կայքէջում:**

**Հիշեցնենք, սակայն, որ «Ազգը», դեռեւս մայիսի 4-ին նախորդ օրվա տվյալներով հրապարակել էր տեղեկատվություն, որի համաձայն Էռնեստ Վարդանյանն ինքը զգուշացրել էր նման «խոստովանության» ի հայտ գալու մասին:**

**Մասնավորապես, Վարդանյանի անունից տարածվել էր իր ընտանիքին եւ կնոջը աջակցելու եւ օգնելու խնդրանքով հայտարարություն: «Հանուն բոլոր սրբությունների, օգնեցեք իմ կնոջն ու երեխաներին: Ինձ պարտադրում են խոստովանել, թե լրտեսել եմ Մոլդովայի օգտին ու դավաճանել հայրենիքին: Շրջահայաց ձեւով ծեծում են, սպառնում հետքեր չթողնելով ավելի դաժան խոշտանգումների ենթարկել: Սպառնում են մեղադրել ու ձերբակալել նաեւ կնոջս՝ արատավորելով նրան: Սպառնում են ֆիզիկական հաշվեհարդար տեսնել կնոջս ու երեխաներիս հետ», ասվում էր մայիսի սկզբին տարածված հայտարարության մեջ:**

**Ըստ մոլդովական լրագրողական կազմակերպությունների՝ Վարդանյանն ահազանգել է իր նկատմամբ ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումների մասին: «Ես լրտես չեմ եւ ոչ մեկին չեմ դավաճանել, ասել եմ միայն ճշմարտությունը՝ հանուն մարդկանց կյանքի բարելավման», ասված էր Վարդանյանի հայտարարության մեջ, հավելմամբ, որ հարցաքննություններում հենց իր գործունեությունն էլ ներկայացվում է որպես մեղադրանք, իբր ավել-պակաս է խոսել լրագրողը:**

**Ներկայացնելով, որ հարցաքննությունները տեսաձայնագրվում են ընտրովի ու դրվագային, Վարդանյանն իր հայտարարությամբ կոչ է անում չհավատալ ու չվստահել իշխանությունների ու քննչական մարմինների կողմից իրեն վերագրվող լրտեսության եւ դավաճանության պնդումներին: «Այստեղ յուրաքանչյուրին կարող են ստիպել ընդունել ուզածդ մեղադրանք: Ինձ ստիպում են վարկաբեկել եւ ցուցմունքներ տալ իշխանություններին քննադատող այլ անձանց դեմ»:**

**Ստացվում է, որ այն, ինչ ասվում էր մոտ տասը օր առաջ տարածված հայտարարության մեջ, դարձել է իրականություն: Ընդ որում, մոլդովական լրագրողական կազմակերպությունները տարածված տեսագրության առնչությամբ բնավ էլ չեն վարանում «լրտեսություն» բառը դնել չակերտների մեջ:**

**Ծնունդով գյումրեցի, 33-ամյա Էռնեստ Վարդանյանը անազատության մեջ է ապրիլի 7-ից: Մերձդնեստրի իշխանությունները նրան մեղադրում են լրտեսության ու հայրենիքի դավաճանության մեջ: Առաջադրված մեղադրանքով Վարդանյանը կարող է դատապարտվել 12-20 տարվա ազատազրկման:**

**Վարդանյանի ձերբակալությունը դատապարտել են միջազգային տարբեր լրագրողական ու իրավապաշտպան կազմակերպություններ եւ Մերձդնեստրի իշխանություններից պահանջել ազատ արձակել լրագրողին: Հայ լրագրողի հարազատներն աջակցություն են խնդրել նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանից, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանից: Իսկ մինչ այդ Էռնեստ Վարդանյանի փաստաբան Ալեքսանդր Պոսիկեն դիմել է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող եվրոպական կառույցներին:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Լրատվամիջոցների համահայկական միության հայտարարությունը

**Լրատվամիջոցների համահայկական ընկերակցությունն իր խորին մտահոգությունն է հայտնում Մերձդնեստրում հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանի դեմ իրականացվող քաղաքական հաշվեհարդարի կապակցությամբ:**

**Մերձդնեստրի ազգային անվտանգության նախարարության տարածած տեսանյութը, որում Վարդանյանը խոստովանել է, թե իբր ինքը համագործակցել է Մոլդովայի իշխանությունների հետ, ըստ էության նրա նկատմամբ կիրառված բռնության եւ շանտաժի արդյունք է, ինչի մասին լրագրողը նախապես տեղեկացրել էր իր ապրիլյան հայտարարությունում:**

**Լրատվամիջոցների համահայկական ընկերակցությունը, դատապարտելով հայազգի լրագրողին անազատության մեջ պահելու իրողությունը, միաժամանակ կոչ է անում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին օգտագործել իրենց հնարավորությունները՝ մեղմելու Էռնեստ Վարդանյանի դեմ սանձազերծված ճնշումները, իսկ Հայաստանի փաստաբանների պալատին հորդորում է միջոցներ ձեռնարկել հայ լրագրողին անհրաժեշտ փաստաբանական աջակցություն ցույց տալու համար:**

*Լրատվամիջոցների համահայկական ընկերակցություն*

# Սպասել մինչեւ շենքը փլվի՞...

**Երեւանի քաղաքապետարանը վերջին մի քանի տարիներին բազմաթիվ 3-րդ աստիճանի վթարային շենքեր վերականգնեց, իսկ մի քանի 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար նոր շենքեր կառուցեց: Պետական միջոցներով իրականացվող այդ գործընթացը մանրամասնորեն լուսաբանվել է մեր թերթի կողմից: Սակայն այս անգամ այդ մասին չէ, որ կցանկանայինք անդրադառնալ:**

**Սեբաստիայի փողոցի 24/1 շենքի 4-րդ մուտքի բնակիչները շենքի տանիքի իրենց հատվածի փլվող վիճակի մասին բազմիցս ահազանգել եւ դիմել են համապատասխան մարմիններին՝ տարածքը սպասարկող համատիրությանը, Մալաթիա-Սեբաստիա համայնքապետարանին, Երեւանի քաղաքապետարանին, բայց ապարդյուն: Ամեն ինչ սկսվեց մի քանի տարի առաջ, երբ «Երեւանգազի» աշխատակիցները մուտքի վերջին հարկում ծխնելույզի համար անցք բացելով՝ վնասեցին շենքի պանելը: Տանիքի բացակայությունից այդ հատվածում վնասված պանելն ու նրան պահող պատերը սկսեցին հեղեղվել հալվող ձյան եւ անձրեւների ջրերով, որից դրանք դեֆորմացվել են եւ կարող են փլուզվել ամեն պահի:**

**Ինչո՞ւ հիշատակեցինք Երեւանի քաղաքապետարանի կողմից 3-րդ եւ 4-րդ կարգի վթարայնության շենքերի վերականգնման մասին: Պարզապես կցանկանայինք հարց ուղղել Երեւանի քաղաքապետին, քաղաքապետարանի համապատասխան վարչության պետին, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի եւ տվյալ տարածքի համատիրության ղեկավարներին՝ գուցե ավելի լավ, հեշտ եւ պակաս ծախսատար է կանխե՞լ շենքի վթարային դառնալը, քան թե սպասել, մինչեւ այն վթարային դառնա, եւ հսկայական միջոցներ ծախսել շենքն ամրացնելու համար: Կարծում ենք, որ այնքան էլ բարդ հարց չէ եւ պատասխանն էլ առանձնապես դժվար չպետք է լինի: Մնում է միայն, որ վերոնշյալ պաշտոնյաները ցանկություն ունենան կատարելու իրենց պաշտոնական պարտականությունները:**

Ա. Ս.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը (պատվիրատու) «ԳՀ–ՀՀՌՑ 05/04/10» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **սպեկտրի անալիզատորի ձեռքբերման նպատակով:**

Գնանշման հարցման հրավեր ստանալու համար պահանջվում է վճար՝ 1000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի ԱՇԻԲ, Աղասյան մ/ճ 247460117994 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Նորք, Հովսեփյան 95:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ը:

*«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 12.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: